

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### «ՄԱՍԻՍ» ՀԱԲԱԹԱԹԵՐԹԸ 28-ՐԴ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

«Մասիս» շաբաթաթերթը կը հանգրուանէ իր հրատարակութեան 28-րդ տարուան սեմին: Լոյս ընծայուող ներկայ համարը կը կազմէ անոր առաջին քիւր: Ուրախ ենք ու հպարտ, որ «Մասիս», պիտի շարունակէ իր անցեալ 27 տարեջրօրհաններու հետապնդած ազգային, ընկերային, պահանջատիրական եւ համամարդկային սրբազան առաքելութիւնը, միշտ հաւատարիմ՝ իր անշեղ ու անսակարկ ժողովրդավարական սկզբունքներուն:

Պատահական չէ, որ «Մասիս»-ի առաքելութեան հիմնական մարզերը բուարկեցնենք ֆիչ առաջ: Ամերիկայի հարաւային շրջանի ասիերու վրայ հրատարակուած առաջին օրէն մինչեւ ներկայ քուսկանները, աւելի քան Բառո՛րդ դար, ան մնաց իր ժողովուրդի կողմին:

Սփիւռքի ասիերուն, «Մասիս» հետեւողական մնաց իր ազգապահպանման պայքարի դիրքերուն վրայ: Ան գործարկ կանգնեցաւ եւ արձագանգեց այն բոլոր կրթական, մշակութային, գրական, քաղաքական եւ ազգային ընդհանրական բնույթի նախաձեռնութիւններուն, որոնք կրնային գործընկեր մեր գոյութեան պահպանման նպաստող կառոյցները: Յայտնաբերեց ու բնագոյնէն այն բոլոր յոռի երեւոյթները, որոնք կը բուրացնէին մեր հաւաքական երբը:

«Մասիս» Հայոց Ցեղասպանութեան նախապատմութիւնը եւ հատուցումի պահանջատիրութեան պայքարը դարձուց իր հաւատարմական կարգը:

Հայրենական քաղաքացիական պատերազմի, «Մասիս» ցուցաբերեց եզակի հոգեկցութիւն յաշտ մեր հայրենաբնակ ժողովուրդին: Լաւապէս իրագրեց հոն տիրող պայմաններուն՝ «Մասիս» դարձաւ հարազատ քարտեզը հոն ապրող մեր ժողովուրդի առօրեայ իրավիճակին:

Ան, անյիշատակ արար, մշտապէս Բաջալերեց եւ իր անվերապահ գործակցութիւնը բերաւ հայրենիքի բարեկաման նպաստող բոլոր նախաձեռնութիւններուն: Ազգով մէկ, մեր ժողովուրդի դարաւոր գրկաններուն, լեռնակուտակ կորուստներուն, անհաւասար մարտնչումներուն եւ քաղաքացիական հատուցումի հանդիսացած էր մեր հայրենի ներկայ անկախութիւնը: Բայց... քայց նաեւ, բնաշատեց, հոն, գիտակցաբար, շահադիտականօրէն եւ խտրականօ-

Շաբ.ը էջ 17

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՍԿԻԶԲ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔԱՐՈՉԱՐՇԱԻ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ԽԱՆԴԱԿԱՌ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ



Լեւոն Տեր-Պետրոսեան աղու հացով կը դիմաւորուի շրջաններ կատարած իր այցի ընթացքին եւ շրջապատուած ընդդիմադիր դեկավարներով կը մասնակցի Երեւանի մէջ տեղի ունեցած երթին



Յունուար 21-ին Հայաստանի մէջ պաշտօնապէս սկսաւ նախագահական ընտրութիւններու քարոզարշաւը: Մինչեւ Փետրուար 19-ը՝ ընտրութիւններու օրը, գրանցուած 9 թեկնածուները առիթ պիտի ունենան Հանրային Հեռատեսիլով ամէնօրեայ ելոյթներու եւ ժողովուրդին բացատրելու իրենց ընտրական ծրագիրները:

Հիմնական երկու թեկնածուները՝ նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան եւ վարչապետ Սերժ Սարգսեան իրենց աշխատանքները

կեդրոնացուցած են տարբեր ուղղութիւններով: Մինչ առաջին նախագահը զբաղած է ժողովուրդի հետ շփուելու եւ անոր մօտ կորով բարձրացնելու աշխատանքով, վարչապետ Սարգսեան կ'ապաւինի պետական միջոցներու ու լծակներու վրայ:

Յունուար 22-ին Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ

կայացաւ բազմահազարանոց հանրահաւաք, որու ընթացքին Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց, որ աւարտած է խօսելու փուլը, եւ այժմ սկսած է գործելու փուլը: Հակառակ խիստ ցուրտ եղանակին, հանրահաւաքին մասնակցողներու թիւը կը հաւասարէր

Շաբ.ը էջ 4

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՈԳԵՅԱՆԳԻՍ ՅՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՄԱՅՈՒՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

Կիրակի, Յունուար 20ին, 2008, Լոս Անճելոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առթիւ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Օրուան պատարագին էր թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեան: Խաչատրեան Դպրաց դասերգչախումբը կատարեց պատարագի քառամասն երգեցողութիւնը, խմբավարութեամբ Բարեշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի:

Պատարագի աւարտին Պոլսահայ Միութեան խնդրանքով տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօնական արարողութիւն տարաբախտ հայրենասէր լրագրող Հրանդ Տինքի մահուան առաջին տարելիցին առթիւ: Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց նախկին առաջնորդ Գերշ. ՏՏ Վաչէ Արք. Յովսէփեան: Իրենց լամբակին վրայ Հրանդ Տինքի նկարը կրող եւ ձեռքերնին մոմեր բռնած հարիւրաւոր հաւատացեալներ լուզումով հետեւեցան արարողութեան:

## ԹՈՒՐՔ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՈՉ Կ'ԸՆԷ ԼՐՉՕՐԵՆ ՔՆՆԵԼ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԻՐԱԲԱՊԱՅՆԵՐՈՒ ՄԵՂԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒ

Թուրքիոյ արդարադատութեան նախարար Մեհմեթ Ալի Շահին կոչ ըրած է լուրջ քննութիւն կատարել այն պնդումներուն շուրջ, որոնց համաձայն՝ «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան մէջ ներգրաւուած են նաեւ ապահովութեան ուժերը:

«Կարծիքներ կան, որ ապահովութեան ուժերու որոշ ներկայացուցիչներ կ'ապուած են այդ սպանութեան հետ», - «Սապահ» թերթին տուած հարցազրոյցի մը ընթացքին ըսած է Մեհմեթ Ալի Շահին եւ աւելցուցած. - «Որեւէ նման մեղադրանք պէտք է դիտարկուի որպէս տեղեկատուութիւն եւ լրջօրէն հետաքննուի»:

«Ֆրանսիերես» լրատու գործակալութեան հաղորդման համաձայն, շաբաթ Յունուար 19-ին, Տինքի սպանութեան տարելիցին օրը, հազարաւոր մարդիկ ցոյցի դուրս եկած են, բողոքելով, որ իշխանութիւնները կ'անտեսեն այն պնդումները, թէ սպանութիւնը իրագործող Օզիւն Սամասթ ու իրեն նախկինները հովանաւորուած են ոստիկանութեան կողմէ: «Եթէ ոստիկանութիւնը իրօք նման յանցանք թույլ տուած է

ուրեմն պէտք է պատժուի», - ըսած է Թուրքիայի արդարադատութեան նախարարը:

Տինքի ընտանիքի փաստաբաններու կարծիքով, ոստիկանութիւնը թաքցուցած է կամ ոչնչացուցած է սպանութիւնը բացայտելու համար անհրաժեշտ ապացոյցներ, որոնց շարքին՝ սպանութեան վայրի մօտ գտնուող դրամատան ապահովութեան սարքերու կատարած նկարահանումները: Բացի այդ, ըստ փաստաբաններու, 2006 թուականին ոստիկանութիւնը տեղեկութիւններ ստացած է Տինքի դէմ ծրագրուող մահափորձի մասին: Սպանութեան յետոյ Սամասթի եւ ոստիկաններէն մէկուն միջեւ տեղի ունեցած հեռաձայնային խօսակցութեան ձայնագրութեան կարելի է ենթադրել, որ իրաւապահը նախապէս իմացած է դաւադրութեան մասին:

«Ֆրանսիերես» կը չիշեցնէ, որ առաջիմ ապահովութեան ուժերու միայն չորս ներկայացուցիչ ընդգրկուած են դատական գործին մէջ, սակայն անոնք մեղադրուած են երկրորդական հարցերով, որոնք առնչուած չեն բուն սպանութեան հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՄՏՐՈՒԿՆԵՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆ

Բազմաթիւ հանրապետականներ, բանից պարզուած է, սաստիկ գայրանում են, երբ նրանց չիղեցնում են իրենց կուսակցութեան նախկին առաջնորդներ Աշոտ Նաւասարդեանի, Վազգէն Սարգսեանի եւ Անդրանիկ Մարգարեանի մասին:

Նրանց գայրոյթը հասկանալի է. հիմա իրենց առաջնորդը Սերժ Մարգարեանն է, եւ Սերժ Մարգարեանը, չգիտես ինչու, չի սիրում, երբ իր «կուսակցական յենարանը» չի շուրջ է կուսակցութեան նախկին ղեկավարներին: Վերջերս, օրինակ, հանրապետականների «հին գուարդիայի» անդամներից մէկը համարձակուել էր հեռուստատեսութեանը դրական բաներ ասել Անդրանիկ Մարգարեանի մասին եւ ոչ մի անգամ չհիանալ Սերժ Մարգարեանով: Եւ ի՞նչ... «դաւաճանական» այդ արարքը կուսակցական քննարկումների առարկայ էր դարձել, իսկ հեռուստահաղորդման կրկնութիւնը պարզապէս հանուել էր եթերից: Զուտ հոգեբանական առումով մարդկային այս դրաման հասկանալի է եւ լաւագոյնս ներկայաց-

պիչներ չկան: Բայց ահա անցնում են տարիներ, եւ ինչ-որ մէկը յայտարարում է, որ ժամանակին իրենք յանուն իշխանութեան այդքան մարդ են «պառկացրել» պատժամենտում, եւ եթէ պէտք լինի՝ այդքան էլ կը պառկացնեն:

Տարրական տրամաբանութիւնը յուշում է, որ Հանրապետական կուսակցութեան պատուախնդիր անդամները պիտի անյապաղ գտնէին այս յայտարարութեան հեղինակին եւ բառիս բուն իմաստով բզիկ-բզիկ անէին: Մանաւանդ որ դա այնքան էլ բարդ բան չէ. սոցյ յայտարարութեան հեղինակը ոչ «Իթիթիհազ վե թարաքի» կուսակցութեան անդամ է, ոչ «Ալ-Քաիդայի», ոչ էլ «Ենի Ազերբայջանի»: Սոցյ յայտարարութեան հեղինակը, որքան էլ զարմանալի է, նոյն Հանրապետական կուսակցութեան անդամն է, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւոր, եւ Հանրապետական կուսակցութեան նախագահի հարազատ եղբայրը: Ի՞նչ է ստացուում: Ստացում է, որ կուսակցութեան առաջնորդը սպանուում է,

Կուսակցութեան առաջնորդը սպանուում է, յետոյ կուսակցութեան մէկ այլ առաջնորդի եղբայրը յայտարարում է, որ դա իրենք են արել, եւ այդ նոյն կուսակցութեան «գաղափարական հայրերը» ոչ միայն իրենք իրենց, մեղմ ասած, յայտնի կենդանու տեղ են դնում, այլեւ յայտարարում են, թէ մինչեւ վերջ պաշտպանելու են իրենց նոր առաջնորդի թեկնածութիւնը, իսկ այդ թեմայի շահարկումը մեծագոյն անբարոյականութիւն է:

ուած է Շեքսպիրի «Համլետում»:  
Այնտեղ էլ բոլորը գիտեն, որ թագաւորը միայն եղբոր սպանութեան շնորհիւ է տիրացել եւ թագուհուն, եւ գահին, բայց գերադասում են այդ մասին չխօսել: Աւելին. կարելի է չկասկածել, որ եթէ «Համլետի» ժամանակներում որեւէ մէկը համարձակուէր բարձրաձայն խօսել այդ մասին, նորընծայ թագաւորի մերձակայքում միշտ էլ կը գտնուէին պնակալէզներ, ովքեր կը յայտարարէին, թէ «այդ թեմայի շահարկումն անբարոյականութիւն է եւ խարխուլ է Դանեմարքայի ներքաղաքական կառուութիւնը»:

Բայց Հայաստանում իրավիճակն այնուամենայնիւ փոքր-ինչ այլ է: Յամենայն դէպս՝ Հանրապետական կուսակցութեան երեք առաջնորդներից առնուազն մէկը հաստատ բնական մահով չի մասացել: Խօսքը, հասկանալի է, Վազգէն Սարգսեանի մասին է: Պաշտօնական վարկածի համաձայն, ահաբեկչութիւնն իրականացրել են հինգ հոգի՝ բացառապէս սեփական նախաձեռնութեամբ, եւ կազմակեր-

յետոյ կուսակցութեան մէկ այլ առաջնորդի եղբայրը յայտարարում է, որ դա իրենք են արել, եւ այդ նոյն կուսակցութեան «գաղափարական հայրերը» ոչ միայն իրենք իրենց, մեղմ ասած, յայտնի կենդանու տեղ են դնում, այլեւ յայտարարում են, թէ մինչեւ վերջ պաշտպանելու են իրենց նոր առաջնորդի թեկնածութիւնը, իսկ այդ թեմայի շահարկումը մեծագոյն անբարոյականութիւն է:

Հանրապետականների բարոյականութեան հետ մենք, իհարկէ, որեւէ գործ չունենք: Դա նրանց խնդիրն է: Եթէ նրանք որոշել են իրենց ամբողջ էութեամբ ծառայել Սերժ Մարգարեանին, ամենեւին կարենք չէ: Պարզապէս կը ցանկանաք ինք, որ նրանք այդ ընթացքում բարոյականութեան մասին չխօսէին: Հայաստանը փոքր երկիր է, բոլորը բոլորին ճանաչում են, եւ դեռ չեն մոռացել, թէ ով իրենից ինչ էր ներկայացնում ընդամենը մի քանի տարի կամ նոյնիսկ մի քանի ամիս առաջ:

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ  
«ԶՈՐՐՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ԱՌԱՅԺՄ՝ ՕՐԻ ՄԷՋ

Շահագրգռուած մարդկանց համար, բնականաբար, յոյժ կարեւոր է, թէ ո՞վ կը դառնայ Հայաստանի երրորդ նախագահը. դրանից է կախուած նրանց պաշտօնական եւ տնտեսական առաջխաղացումը, կամ ընդհակառակը՝ անկումը: Բնականաբար, նրանք ընտրարշաւի ժամանակ ընկնելու են չափազանցութիւնների գիրկը՝ վստահեցնելով մեզ, որ իրենց թեկնածուի եւ մնացածների միջեւ ընտրութիւնը, ըստ էութեան, ընտրութիւն է դրախտի եւ դժոխքի միջեւ: Մանաւանդ, որ թեկնածուները՝ ոմանք հրապարակաւ, ոմանք էլ՝ նեղ շրջանակում, խոստանում են իրենց կողմնակիցներին, որքան

մենք իսկապէս երանութեան մէջ ենք, ինչպէս որ պնդում են իշխանութիւնները, ապա գուցէ ոչ մի բարեփոխում էլ պէտք չէ՞:

«Բարեփոխում» ասելով ես հասկանում եմ այնպիսի մի կտրուկ փոփոխութիւն, որը կարող է լուծել մի շարք կուսակուած խնդիրներ: Օրինակ, օրէնք ընդունել, համաձայն որի՝ բոլոր 18 տարեկան պատանիները, անկախ նրանից՝ ընդունուել են բուհ, թէ ոչ, պէտք է ծառայեն բանակում, բայց՝ ընդամենը մէկ տարի: Դա կը լուծի երկու խնդիր. բուհը չի լինի բանակից փախչելու տեղ, իսկ բանակը չի ընկալուի որպէս պատիժ՝ վատ սովորելու կամ ընդունելու-

Օրէնք ընդունել, համաձայն որի՝ բոլոր 18 տարեկան պատանիները, անկախ նրանից՝ ընդունուել են բուհ, թէ ոչ, պէտք է ծառայեն բանակում, բայց՝ ընդամենը մէկ տարի: Դա կը լուծի երկու խնդիր. բուհը չի լինի բանակից փախչելու տեղ, իսկ բանակը չի ընկալուի որպէս պատիժ՝ վատ սովորելու կամ ընդունելու-

շատ կոկորդ պատուէք մեզ համար, այնքան բարձր պաշտօններ կ'ստանաք:

Բայց ինչ անեն մնացած՝ «չշահագրգռուած» մարդիկ, որոնք ընտրողների բացարձակ մեծամասնութիւնն են կազմում: Նրանք, ըստ երեւոյթին, պէտք է փորձեն հասկանալ ոչ թէ ով է դառնալու յաջորդ նախագահը, այլ՝ ինչ է նա անելու: Այստեղ է, որ դեռեւս յստակութիւն չկայ: Բերեմ պարզ օրինակ. հանրապետականները խօսում են «երկրորդ սերնդի բարեփոխումները» մասին, բայց չեն բացատրում, թէ ինչ է դա նշանակում: «Առաջին սերնդի բարեփոխումները» հասկացութիւնը շատ աւելի պարզ է. դա անցում էր անբնական, խեղուած, վարչական «սոցիալիզմից» դէպի շուկայական յարաբերութիւններ: Որքան էլ ներկայիս իշխանութիւններն այդ բարեփոխումները քննադատեն, որքան էլ ժողովուրդը դրանցից դժգոհ մնայ, դրանք, իմ կարծիքով, միակ հնարաւոր եւ ճիշդ ճանապարհն էին Հայաստանի համար: Բայց նոյնիսկ նրանք, ովքեր ինձ հետ համաձայն չեն, հաւանաբար, կ'ընդունեն, որ այդ բարեփոխումները անց են կացուել որոշակի գաղափարական հենքով եւ որոշակի նպատակներով: Կարող ենք նոյնն ասել «երկրորդ սերնդի» մասին: Դժբախտաբար, ոչ: Որովհետեւ նախ պէտք է հասկանալ, թէ որտեղ ենք գտնուում եւ ուր ենք պատրաստուում գնալ: Եթէ

թեան քննութիւններին կաշառք չտալու համար: Կամ՝ օրէնքով արգելել պետավտոտեսուչներին կանգնեցնել մեքենաները: Խախտումները ֆիքսել տեսախցիկներով եւ յետոյ նամակով ծանուցել օրինախախտ վարորդին, որ նա այսինչ տեղը պէտք է սուզանք մուծի:

Վստահ եմ, որ կարելի է գտնել մեխանիզմներ՝ լուծելու համար մեր գլխաւոր ներքին խնդիրը՝ բիզնեսի եւ իշխանութեան սերտաձուլումը: Բայց մեր թեկնածուներն այդ խնդիրները, կարծես թէ, չեն յուզում: Աւելի հեշտ է, իհարկէ, իրար դէմ սուր ձոճել եւ օղցնել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ  
«ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԼՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՂՈՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ՍԱՅԱ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՍՏԱՆԵԱՆ  
ՅՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
Գեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ԱՅՑ ԱՌԱՋԻՆ. ՈԳԵՒՈՐԻՉ

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջին նախընտրական այցը փաստացի ապացուցեց այն, ինչի մասին արդէն երկար ժամանակ խօսում են միասնական ընդդիմութեան ներկայացուցիչները. Հայաստանում սկսուել է հուժկու քաղաքական պրոցէս, որի տրամաբանական աւարտը լինելու է առաջին նախագահի յաղթանակն առաջին կայ նախագահական ընտրութիւններում: Արթիկի, Արագածի, Ապարանի, Աշտարակի տարածաշրջաններում առաջին նախագահի ունեցած նախընտրական

հանդիպումները, ըստ էութեան, տեղի էին ունենում տեղեկատուական շրջափակման պայմաններում: Մինչեւ երէկ այդ տարածաշրջանների ընտրողները հիմնականում Տէր-Պետրոսեանի վերաբերեալ հակաբարոզութիւն են ստացել «Հայ լուրի» եւ միւս հեռուստաընկերութիւնների եթերից: Այս ամէնը, սակայն, ամենեւին չխանգարեց, որ նշուած տարածաշրջանների շուրջ տասը բնակավայրերում տեղի ունենան Էրեմ հանդիպումներ, իսկ Արագածոտնի մարզի մի քանի գիւղերի բնակիչները փակել են



ԼՈՒՐԵՐ

ՍԱՇԻԿ ՍԱՐԳՍԵԱՆԸ՝ ԱՐԱԲԵԿԻ՞Չ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԻ»: «Լեզուի մասին նախագահ -2008» նախաձեռնող խմբի հերթական քննարկումը նուիրում էր 2007թ. տարեվերջին «Հայկական ժամանակ» օրաթերթում տպագրված այն տեղեկատվությանը, ըստ որի Սերժ Սարգսյանի եղբայր Սաշիկ Սարգսյանը, մի շարք անձանց ներկայությունով ասել է հետևյալը. «Հոկտեմբերի 27-ին էդքան մարդ փոքրից էր, որ իշխանությունը սրանց յանձնենք: Պէտք էրաւ էլի կը փոքնէք»:



Սերժ Սարգսյանի եղբայր Սաշիկ Սարգսյան

«Դա շատ անհանգստացնող յայտարարություն էր եւ շատ տարօրինակ է, որ իշխանությունների կողմից որեւէ արձագանք չեղաւ: Դա կարելի է գնահատել բառիս բուն իմաստով անաբեկչութիւն», - նշեց ՍԴՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսյանը: Աժ նախկին պատգամաւոր Գուրգէն Եղազարեանը նախքան Սաշիկ Սարգսյանի յայտարարությունները անդրադառնալով՝ բերեց մի քանի օրինակներ: Մասնաւորապէս, նա նշեց գրող եւ հրատարակիչ Ռոբերտ Կարաեանի հետ տեղի ունեցածը. «2006թ. Մայիսին նրանց ծեծի ենթարկեցին էրեբունոյ թաղամասում, հենց թաղապետարանում՝ հասցնելով ծանր մարմնական վնասուածքներ: Նա գնացել էր 4 փախստական երեխաների գործող, որպէսզի պաշտպան կանգնի նրանց»: Թէեւ, այս կապակցութեամբ շատ է խօսուել, սակայն մինչ օրս Կարաեանը ոչ մի պատասխան չի ստացել կատարուած իր անարդարութեան մասին: Դեռ աւելին, դրանից մի քանի օր անց նրան արդէն ծեծել են անյայտ սահմաններում «Ռոսիա» կինոթատրոնի մերձակայքում, իսկ 2008թ. Յունուարին բանաստեղծը արդէն դաժան ծեծի է ենթարկուել անյայտ անձանց կողմից իր բնակարանի մերձակայքում: Վերջին պատահարը Գուրգէն Եղազարեանը կապում է Կարաեանի այն ստորագրութեան հետ, որը նա դրել է այն յայտարարութեան տակ, որով պահանջուեց պատասխանատուութեան ենթարկել այն անձանց, ովքեր առնչութիւն ունեն Սաշիկ Սարգսյանի յայտնի յայտարարու-

թեան հետ. «Ինչպէս տեսնում էք Հայաստանում այլախոհութիւնը որպէս կանոն պէտք է պատժուի: Թող տուեց ասել, որ այս ամէնի հետեւում ցցուած են իշխանութեան ականջները»:

Նախաձեռնող խումբը իր քննարկումները հրաւիրել էր նաեւ «Հժ»-ի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինեանին եւ Սաշիկ Սարգսյանին: «Փաշինեանը մեզ հաւաստիացրեց, որ հրատարակումը համապատասխանում է իրականութեանը եւ աւելացնելու ոչինչ չունի: Սաշիկ Սարգսյանը ինչպէս տեսնում էք ներկայ չէ», - յայտնեց «Հայրենիք»-ի պատրիարք կուսակցութեան նախագահ Գառնիկ Սարգսյանը: «Լեզուի մասին նախագահ-2008» նախաձեռնող խումբը դատաւարտեց նաեւ ՄԻԱԿ կուսակցութեան անուան տակ՝ Սերժ Սարգսյանի քարոզչութիւնը իրականացնող երիտասարդներին: Ըստ Գառնիկ Սարգսյանի՝ նրան յատուկ համազգեստներով ոտնձգութիւններ են կատարում քաղաքացիների դէմ. «Երիտասարդութեան մի զգալի հատուածի դասերից ազատել են: Բնական է, որ ստուգարքները կամ քննութիւնները փակուած են: Ստացել են համապատասխան գումարներ, համապատասխան հագուստ եւ շրջում են քաղաքում: Իշխանութիւնները խօսում են ազատ եւ արդար ընտրութիւնների մասին, մինչդեռ վերջին 2 ամիսներին 50 ընտրական օրէնսգրքի խախտում է արձանագրուած: Դրան գումարած այս երիտասարդների այցերը»:

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»-Ը «ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎՃԻՌ ԿԸ ԿԱՅԱՑՆԻ ԱԲԵԼԻ ՈՒՇ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Անցած շաբաթավերջին Բաֆֆի Յովհաննիսեանի գլխավորած «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչչութիւնը որոշել է Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւններում կուսակցութեան դիրքորոշման վերաբերեալ վճիռը «կայացնել աւելի ուշ»:

«Սթափ մօտեցումը ցոյց է տալիս, որ որեւէ մէկ ընդդիմադիր թեկնածու այսօր ինքնուրոյն, առանձին վերցուած չի կարող յաղթահարել այն բարիքները, որ ստեղծուած են իշխանութեան կողմից իշխանափոխութեան ճանապարհին: Բնականաբար, պէտք է ուժերի համատեղում... Պէտք է ինչ-որ չափով կողքի դնել սեփական ամբիջիների մի հատուածը գոնէ եւ գնալ միակողմանի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում, մեկնաբանելով որոշումը, ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան խօսնակ Յովսէփ Խուրշուդեանը:

«Կոչ անել Վազգէն Մանուկեանին, Վահան Յովհաննիսեանին,

Արթուր Բաղդասարեանին եւ Լեւոն Տէր-Պետրոսեանին՝ յաղթական համատեղման նպատակով արտասարկար ու լիազօր վերանայում կատարել մեկնակցելիք նախընտրական պայքարի մարտավարութեան մէջ, ինչպէս նաեւ պատրաստակամութիւն յայտնել այս նպատակի իրականացումը սպասարկելու համար», - ասուած է վարչութեան որոշման մէջ: - «Վերթնալիք թեկնածուներից նուազագոյնը երկուսի միակողման անհրաժեշտութեան չկատարման դէպքում կուսակցութեան վերջնական վճիռը կայացնել աւելի ուշ»:

Պարզաբանելով, թէ ինչու որոշման մէջ նշուած չէ «Ազգային Միաբանութեան» առաջնորդ Արտաշէս Գեղամեանի անունը, Խուրշուդեանը ասաց. - «Ակնյայտ է, որ Արտաշէս Գեղամեանի քարոզչութիւնը, յամենայն դէպս, մինչեւ այսօր որ հնչել է, միտումնաբէր էր իրականացնում համակարգային փոփոխութիւնների իրականացմանը, այլ աւելի շատ ամրապնդում է հենց իշխանութեան դիրքերը»:

«ՕՐԸ ՑԵՐԵԿՈՎ ԳՅՈՒՄ ՓՈՂ ԵՆ ԲԱԺԱՆՈՒՄ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԻ»: 2008թ. նախագահի ընտրութիւններին ՕԵԿ-ը կը մասնակցի միանգամից երկու կարգախօսով՝ «Հայաստան, բաց արա քո աչքերը» եւ «Նոր Հայաստան»:



ՕԵԿ առաջնորդ, ՀՀ նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարեան

ՕԵԿ առաջնորդ, ՀՀ նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարեանի նախընտրական ծրագիրը ամփոփուած է 7 կէտով՝ նոր աշխատատեղերի ստեղծում, պրոֆեսիոնալ բանակ, այսինքն՝ պայմանագրային զինծառայութիւն, բնակարանների ապահովում, հարկերի եւ տուրքերի նուազեցում, երիտասարդներին օժանդակութիւն, գիւղաբնակներին եւ աղէտի գոտու օժանդակութիւն եւ աշխատավարձերի եւ կենսաթոշակների կտրուկ բարձրացում: Իր ծրագրում տեղ գտած իւրաքանչիւր կէտի իրականացումը այսօր Բաղդասարեանը փորձեց հիմնաւորել կոնկրետ օրինակներով ու փաստերով՝ ընդգծելու համար, թէ ներկայիս իշխանութիւնները ինչպէս են թալանում, հարստահարում ժողովրդին:

«3 տարի է մենք ՌԴ-ից գազ ենք գնում: 1000 խորանարդ գազի դիմաց մենք վճարում 110 ԱՄՆ դոլար: Երբ մենք կնքեցինք այդ պայմանագիրը, դոլարի գինը 500 դրամ էր, իսկ այսօր՝ 300, սակայն նոյն գազի դիմաց պետութեանը մենք տալիս ենք նոյն 500-ով գինը, պետութիւնը դոլարը գնում է 300 դրամով եւ տալիս ռուսին: Ու՞ր են գնում այդ միլիոնները», - «Արմենիա Մարիոթ» հիւրանոցի սրահում գոտուողներին դիմեց ՕԵԿ առաջնորդը: Նա բոլորին տեղեկացրեց եւ զգուշացրեց, որ արդէն այսօր բազմաթիւ բնակավայրերում մարդկանց ցուցակներ են կազմում գումարներ բաժանելու

ՎԱԶԳԵՆ ՍԱՆՈՒԿԵԱՆ. «ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՎԱՏԻ ԵՒ ԼԱԻՒ ՄԻՋԵՒ»

«ԱԶԱՏ ՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Ազգային ժողովրդավարական Միութեան (ԱԺՄ) նախագահ, Փետրուարի 19-ի ընտրութիւններում նախագահի թեկնածու Վազգէն Մանուկեանը պաշտօնական քարոզարշաւի առաջին օրը հանդիպեց երիտասարդութեան ներկայացուցիչների հետ:



Կը քարձրանայ Վազգէն Մանուկեանի ընտրական ցուցապատկերը

«Ես կարեւորում եմ պետութեան համար երիտասարդութեանը», - ասաց Մանուկեանը՝ պարզաբանելով. - «Որովհետեւ մեր ծրագրային հիմքում ընկած է մարդու ազատութիւնը, եւ ոչ մէկը այնքան լաւ չի հասկանում դա, որքան ժամանակակից երիտասարդութիւնը»:

«Երբ քննարկում ենք, թէ ինչու է այս պետութիւնը գոյնում վատ վիճակում, ապա կարեւորագոյն ձողը, որ մենք ուզում ենք ընդգծել, դա մարդու ազատութիւններն են», - շարունակեց նա: - «Միայն ազատ մարդը կարող է լինել ազգային կամ ոչ ազգային, կարող է կառուցել պետութիւնը, կարող է ստեղծագործել, կարող է գոհ լինել իր կեանքից, կարող է գնալ գոհաբերութիւնների»:

ԱԺՄ-ի նախագահը սխալ է համարում, երբ մարդիկ ասում են, թէ ստիպում են ընտրել չարեաց փոքրագոյնը. - «Եթէ մարդիկ իրենց քուէարկութեամբ որոշում են իրենց նախագահին, ինչո՞ւ

համար. «Իսկ երկրի իշխանութիւնները՝ իրենց ստեղծած իրաւական համակարգով միաբերան յայտարարում են՝ բա՞ ՀՀ-ում կաշառք բաժանուած է: Օրը ցերեկով, մեքենաները կանգնացրած Հայաստանում փող են բաժանում, ասում են նման բան չկայ»: Ամէն ինչ սկսում է այստեղից ու աչքակապութիւնից»:

Երկրում անօրինականութիւններին վերջ տալու համար ՕԵԿ առաջնորդը նախագահ դառնալու դէպքում խոստացաւ հաստատել օրէնքի երկիր: Առաջին հերթին նա պատրաստուած օրինական դաշտ ստեղծել գործարարների համար. «Ամբողջ աշխարհում մտածում են բիզնեսի ազատականացման մասին, իսկ մեր երկրում հետապնդումների են ենթարկուած ոչ միայն գործարարին, այլեւ նրա ընտանիքին, հարազատներին»:

«Այս երեւոյթը գնալով աւելի է արմատաւորուած: Կոռուպցիայի դէմ չի կարող պայքարել հենց ինքը կոռուպացուածը, թալանի դէմ չի կարող պայքարել թալանչի», - ասաց Բաղդասարեանը:

պիտի չարեաց փոքրագոյնը ընտրեն. ընտրութիւնների ժամանակ պէտք է լինի ընտրութիւն վատի եւ լաւի միջեւ: Եւ ժողովուրդը պէտք է ընտրի լաւին»:

Ներկայ համակարգի պայմաններում, ըստ Մանուկեանի, ապագայ նախագահը պէտք է խուսափի երկու վտանգներից. - «Ինքը կարող է իրեն զգալ մեսիա՝ որպէս փրկիչ այս ազգի, ու քանզի այն ամէնը, ինչ կայ. դա մի ծայրայեղութիւն: Միւս ծայրայեղութիւնը, որ աւելի վտանգաւոր է եւ աւելի տեսանելի, մարդը կարող է գալ, տեսնել, որ բուրգը ձեւաւորուած է, եւ եթէ դու բուրգի գագաթին ես գտնուում, դու ունես անսպառ իշխանութիւն եւ անսպառ քանակութեամբ ֆինանսներ, ինչո՞ւ մաս չդառնալ այդ բուրգին: Մեզ պէտք է մարդ, որը ոչ այս ծայրայեղութեան մէջ ընկնի, ոչ էլ՝ այն»:



**ԼՈՒՐԵՐ**

**ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ «ԷՔՁԻԹ ՓՈԼ» ԶԻ ԱՆՑԿԱՑՈՒԻ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ամերիկայի Միացեալ Նահանգներ  
ի Միջազգային Զարգացման Գործակալու  
Թիւնը (ԱՄՆ ՄԶԳ) ու Միջազգային  
Հետազոտական Ինստիտուտը (IRI) ետ են վերցնում  
Հայաստանի նախագահի ընտրութիւնների  
ընթացքում էքզիթ փոլի անցկացման  
առաջարկը:

Հայաստանում Միացեալ Նահանգների  
ղեկավարութեան տարածած հաղորդագրու  
թեան համաձայն, «Հայաստանում 2008 թուակա  
նի նախագահական ընտրութիւնների ժամանակ  
էքզիթ փոլի անցկացման առաջարկի վերաբերեալ  
բոլոր շահագրգիռ կողմերի միջեւ ինտենսիվ  
եւ մանրամասն քննարկումներից յետոյ Միջազգային  
Հանրապետական Ինստիտուտը (IRI) եւ Բոլթիկ  
Սըրվէյզ/Գեյլափ (Baltic Surveys Ltd/Gallup) կազմակերպութիւնը  
չկարողացաւ բոլոր ընթացակարգային հարցերի  
համար գտնել այնպիսի լուծումներ, որոնք կը  
բաւարարէին բոլոր

կողմերին: Հետեւաբար, ԱՄՆ-ի ղեկավարութիւնն  
ու ԱՄՆ ՄԶԳ-ն որոշեցին չիրականացնել այդ նախագիծը»:

«Մենք շարունակում ենք մնալ այն կարծիքին,  
որ էքզիթ փոլի անցկացումը սկզբունքորէն կարող է  
օգտակար գործիք հանդիսանալ ընտրութիւնների  
թափանցիկութեան եւ վստահութեան մեծացման  
համար», - ասուած է հաղորդագրութիւնում. - «Կոնկրետ  
այս դէպքում, հաշուի առնելով նախապատրաստական  
աշխատանքների համար մինչեւ Փետրուարի 19-ը  
մնացած սահմանափակ ժամանակը եւ քաղաքական  
դաշտի տարբեր մասերում բարձրացուած հարցերը,  
մենք որոշում կայացրեցինք, որ առաւել խելամիտ  
կը լինի չշարունակել մի այնպիսի նախագիծ, որի  
իրականացման հետ կապուած ինդիւնք կան,  
ու որը կարող է Հայաստանի քաղաքական բանավէճում  
ոչ օգտակար խմբումներին տեղիք տալ»:

**ԲԵՌՆԱՐ ՖԱՍՅԷ. «ՍԱ ԼԱՒԱԳՈՅՆ ԱՌԱՋԱՐԿՆ Է, ՈՐ ՄԵՐ ԵՐԵՔ ԵՐԿՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Եւրոպայում Անվտանգութեան եւ Համագործակցութեան  
Կազմակերպութեան (ԵԱՀԿ) Մինսկի խմբի համանախագահները  
աւարտուող տարածաշրջանային այցի ընթացքում «լսել են  
Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների տեսակէտները  
Մարդիկը ում ներկայացուած փաստաթղթի վերաբերեալ»:

Երեւանում հրաւիրած ասուլիսում նրանք ասացին,  
որ չէին ակնկալում, թէ այս այցելութիւնը կը հանգեցնի  
վերջնական համաձայնութեան. - «Խնդիրն առայժմ  
դիտարկումներին ծանօթանալն էր»:

«Մեր տպաւորութեամբ, երկու նախագահները  
շարժուած են նոյն ուղղութեամբ եւ ընդհանուր պատկերացում  
ունեն այն մասին, թէ այս ընդհանուր սկզբունքների  
վերաբերեալ համաձայնութիւնը ինչ տեսք պէտք է  
ունենայ», - ասաց ամերիկացի համանախագահ Մեթիւ  
Բրայզան:

«Սա լաւագոյն առաջարկն է, որ մեր երեք երկրները  
կարող են ներկայացնել խնդրի կարգաւորման համար»,  
- ասաց ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասյէն:  
- «Մենք երկու կողմերին էլ բացատրել ենք, որ այստեղ  
ծուղակներ չկան: Զկայ յետին միտք, որ կարող է  
կողմերից մէկի շահերը աւելի ցածր դասել»:

Համանախագահները Երեւան էին վերադարձել  
Լեւոնային Ղարաբաղից, եւ Մեթիւ Բրայզան վստահեցրեց,  
որ Հայաստանից ու Ղարաբաղից հեռանում են «խորը  
երախտագիտութեամբ» եւ «այս խնդրում մարդկային  
գործօնի նկատմամբ աւելի խորը կապ զգալով»:

Ֆրանսիացի համանախագահը ասաց, որ իրենք  
«ուրախ էին լսելու Ղարաբաղի ղեկավարութեան խելամիտ  
եւ պրագմատիկ մօտեցումները»:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ատրպէյճանի  
նախագահների փաստարկներին՝ Մեթիւ Բրայզան, ով  
երկու օր առաջ ասել էր, թէ «նախագահներին  
անհրաժեշտ է ժամանակ տալ փաստաթուղթը ու-

սումնասիրելու համար», հարցին, թէ որքան  
ժամանակ է դրա համար անհրաժեշտ եւ արդեօք  
կարելի է վերջնական պատասխան ակնկալել մինչեւ  
Հայաստանի նախագահի ընտրութիւնները, պատասխանեց.  
- «Մենք պէտք է խուսափենք արհեստական  
վերջնաժամկէտներից եւ նախագահներին տանք  
այնքան ժամանակ, որքան նրանց անհրաժեշտ է  
ուսումնասիրելու համար ամէն նախադասութիւնը,  
ամէն բառը, ամէն տառը: Մենք զգում ենք, որ  
նրանք փորձում են գործընթացը աւարտին  
հասցնել որքան հնարաւոր է շուտ»:

Տարածաշրջանային լուրերի համաձայնութեան»  
յոյս էր յայտնել: Հիմա, նրա գնահատականով,  
դրա անհրաժեշտութիւնը չկայ, քանի որ, «լսելով  
նախագահների մտահոգութիւնները եւ դիտարկումները»,  
իրենք եկել են հետեւեալ երկու եզրակացութիւններին. նախ՝  
նախագահները լուրջ են վերաբերում խնդրին,  
եւ ապա՝ «փաստաթղթում կան որոշ ձեւակերպումներ,  
որ նրանք ուզում են յստակեցնել»:

Ռուսաստանի համանախագահ Եւրի Մերզլեակովը, անդրադառնալով  
Պաքուում Ատրպէյճանի նախագահի հետ  
հանդիպմանը, ասաց, որ իրենք շեշտել են հիմնախնդրի  
բացառապէս խաղաղ կարգաւորման անհրաժեշտութիւնը:

«Մենք ասացինք պարոն Ալիեւին, որ կարող  
ենք նրա հետ համաձայնել միայն մէկ հարցում՝ որ 2008-ը  
պէտք է գործընթացի համար որոշիչ տարի լինի:  
Մնացածի մասին ես բացատրեցի, թէ ինչպէս ենք  
դրան վերաբերում», - յաւելեց Մերզլեակովը:

Բեռնար Ֆասյէն եւս մէկ անգամ ընդհանրացրեց,  
որ այս այցի ընթացքում իրենք վերջնական պատասխան  
ողջ փաստաթղթի վերաբերեալ չէին ակնկալում.  
- «Մենք ակնկալում էինք մասնակի պատասխաններ  
եւ դիտարկումներ առանձին հատուածների վերաբերեալ»:

**ԹԱՆԵՐ ԱՔԶԱՄ. «ԱՆՑԱԾ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ԱՆՐԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ԽՈՐԱՑԵԼ Է»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ստամբուլի «Ակօս» թերթի խմբագրապետ  
Հրանդ Դինքի սպանութիւնից անցած մէկ տարում  
անհանդուրժողականութեան մթնոլորտը  
թուրքիայում ոչ միայն չի մեղմացել, այլեւ  
աւելի է խորացել: Այդ մասին յայտարարել է  
թուրք առաջադէմ մտաւորական Թաներ Աքչամը  
վաշինգտոնում կայացած ասուլիսում:



Թուրք մտաւորական Թաներ Աքչամը յայտարարեց Վաշինգտոնում կայացած ասուլիսում:

Ամերիկայի Հայկական Համագումարի  
հաղորդագրութեան համաձայն, Մամուլի Ազգային  
Ակումբում կայացած հանդիպման ժամանակ  
պատմաբան, Միլենտոսայի համալսարանի պրոֆեսոր  
Աքչամը յայտարարել է, որ թուրքական կառավարութիւնը,  
մամուլը եւ իրաւապահ մարմինները համաձայնեցուած  
ձեւով հետապնդում եւ ահաբեկում են այն մտաւորականներին,  
ովքեր անհամաձայնութիւն են յայտնում 1915 թուակա  
նի իրադարձութիւնների վերաբերեալ կառավարութեան  
վարկածին. - «Ստեղծուել է մի մթնոլորտ, որում  
մտաւորականների դէմ յարձակումները եւ հետապնդումները  
դիտուում են որպէս հայրենասիրական քայլ:  
Լրատուամիջոցները յարձակուած են մտաւորականներին  
վրայ եւ նրանց վերածում գոհերի, որոնց նկատմամբ  
կարելի է որս սկսել ... արդարադատութեան համակարգը  
պատժում է մտաւորականներին, իսկ ելուզակներին  
իրաւապահ մարմիններն օգտագործում են որպէս  
գինտոլորներ՝ թիրախ ընտրուած մտաւորականների  
վրայ յարձակուելու եւ նրանց սպանելու հա-

մար: Կառավարութիւնը կոծկում է այդ յանցագործութիւնները,  
լղորդում ապացոյցները եւ սատարում այդ յանցագործութիւններին  
մեղսակից իրաւապահներին»:

Թաներ Աքչամը համոզմամբ, Դինքը ընտրուել էր որպէս թիրախ,  
քանի որ ուղղակի վտանգ էր սպառնում նրան, ինչ թուրքերն  
անուանում են «խորքային պետութիւն»՝  
կառավարութեան ընդերքում թաքնուած  
ազգայնական համակարգ, որը հետապնդում է բարեփոխումների  
կողմնակիցներին եւ այլ «թշնամիներին»:

Աքչամը Թուրքիայից հեռացել է  
ԱՄՆ 2001 թուակախին, երբ Հայոց ցեղասպանութեան  
մասին նրա աշխատութիւնը լոյս է տեսել անգլերէն:  
2006 թուակախին նա հրատարակել է «Ամօթալի  
ակտ. Հայոց ցեղասպանութիւնը եւ թուրքիայի  
պատասխանատուութեան հարցը» գիրքը,  
ինչից յետոյ արշաւը նրա դէմ թուրքիայում  
նոր թափ է ստացել:

Հրանդ Դինքը սպանուել է անցեալ տարուայ  
Յունուարի 19-ին «Ակօս»-ի խմբագրատան դիմաց՝  
17-ամեայ ազգայնական Օզիւն Սամասթի կողմից:

**ՊԱՇՏՏԱԿԱՆ ՍԿԻԶԲ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

Շարունակուած էջ 1-էն

Դեկտեմբեր ամսուն տեղի ունեցած հանրահաւաքներու  
մասնակցող ժողովուրդին:

Իր ելոյթի ընթացքին Տէր-Պետրոսեան խօսեցաւ  
յառաջիկայ ընտրութիւններու ընթացքին կեդրոնները  
կանխելու մասին: Ան կոչ ըրաւ ժողովուրդին,  
որպէսզի իւրաքանչիւրը պատրաստ ըլլայ  
պայքարելու նման հաւանականութեան դէմ:

Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց,  
թէ Փետրուար 19-ի ընտրութիւնները խորհրդանշական  
պիտի դառնան անով, որ առիթ պիտի տրուի  
ամոքելու 1998-ի եւ 2003-ի նախագահական  
ընտրութիւններու ընթացքին ժողովուրդի ապրած  
վիճակները: «Փետրուարի 19-ը լինելու է ոչ  
միայն իմ յաղթանակը, այլեւ կարէն Դեմիրճեանի,  
Ստեփան Դեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի  
յաղթանակը», - ըսաւ Լեւոն Տէր-Պետրոսեան:

Երեքշաբթի օրուայ Հանրահաւաքին  
յաջորդեց երթ: Մաշտոցի պողոտայով,  
Ամիրեան փողոցով երթի մասնակիցները  
մտան Հանրապետութեան հրապարակ եւ կառավարութեան  
չէնքի առջեւ կանգ առնելով վանկարկեցին՝  
«Սերժիկ, հեռացիր», «Լեւոն, նախագահ» եւ «Յաղթանակ»:

Զարմանալիօրէն երթին չէին հետեւէր  
ոստիկաններ, թէեւ որեւէ անկարգութիւն  
տեղի չունեցաւ: Երթի մասնակիցներուն  
կը միանային փողոցի անցորդները,  
իսկ շէնքերու պատուհաններէն բազմաթիւ  
բնակիչներ կ'ողջունէին Լեւոն Տէր-Պետրոսեանին  
եւ ընդդիմադրութեան միւս ղեկավարներուն:

Օր մը առաջ, Լեւոն Տէր-Պետրոսեան  
ընկերակցութեամբ Ստեփան Դեմիրճեանի  
եւ Սարգսեանի այցելեց Շիրակի եւ Արագածոտնի  
մարզի մի քանի բնակավայրերը, ամէնուրեք  
արժանանալով ժողովրդային ջերմ ու  
խանդավառ ընդունելութեան:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆԴԱՐՏ ԽՈՐԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԱՐԱՐՈՒՄԻՑ ԱՌԱՋ

ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ո՞ւմ ընտրել: Այս հարցը ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիներին մտատանջում է գոնէ վերջին ամիսներին, երբ թեկնածուներն առաւօտից երեկոյ թմբկահարում են իրենց ընտրուելու անխուսափելիութեան թեման: Ոմանք այդ անխուսափելիութիւնը պատճառաբանում են նախընտրական ծրագրերի բովանդակութեամբ, ոմանք՝ թեկնածուների անձնային որոշ իւրայատկութիւններով: Առաջարկում ենք համեմատել երկու հակադիր բեւեռների եւ իբրեւ երրորդ ուժ ներկայացող ՀՀ նախագահի թեկնածուների նախընտրական ծրագրերի ուշագրաւ դրոյթները:

ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ծրագիրը վերնագրել է «Հանդարտ խոհեր», Սերժ Սարգսեանն իր նախընտրական ծրագրում յատուկ շեշտադրմամբ ներկայացնում է «Երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագիրն» իբրեւ ներկայ իշխանութեան շարունակութեան հիմք, իսկ Արտաշէս Գեղամեանն իր ընտրողներին ներկայացնում է «Արարման ծրագիր»:

Շատ չչտապենք ու նախ մէջբերենք մի հատուած Տէր-Պետրոսեանի հանդարտ խոհերից: «Նախընտրական ծրագրերը, մանաւանդ յետխորհրդային տարածքի երկրներում, ունեն իրենց ստանդարտ կառուցուածքն ու բովանդակութիւնը, որոշ առումով նմանուելով պաշտօնական հրովարտական: Դրանք, որպէս կանոն, ընդգրկում են հասարակական, քաղաքական, տնտեսական բնագաւառներին վերաբերող այն միջոցառումների եւ վերափոխումների կատարումը, որոնք խոստանում է իրականացնել ընտրողների քուէն հայցող ցանկացած թեկնածու: Նախընտրական ծրագրերի շարադրանքում, սովորաբար, տիրապետող դիրք է զբաղեցնում ամենագործնորոշ դերբայը՝ «աւելացնել», «բարձրացնել», «զարկ տալ», «էլ աւելի զարգացնել», «ամրապնդել», «ընդլայնել», «խորացնել», «հոգ տանել», «ուշադրութիւն դարձնել», «հետեւողական պայքար մղել», «արմատախիլ անել» եւ այլն: Սակայն այդ դերբայները որքան անորոշ են ձեւով, այնքան էլ՝ դժբախտաբար, բովանդակութեամբ»: Այնպէս որ, Տէր-Պետրոսեանն արձանագրում է, որ ընտրող-

ների համար շատ աւելի կարեւոր են ոչ թէ թեկնածուների նախընտրական ծրագրերը, այլ թեկնածուների «անձնական յատկանիշները՝ կենսագրութիւնը, խարիզման, բարոյական նկարագիրը, մասնագիտական ունակութիւնները, փորձը եւ այլն: Իսկ երբեմն նոյնիսկ սրանք էլ աւելորդ են. բաւական է արտաքին տեսքը, հմայքը, պերճախօսութիւնը»:

Արտաքին տեսքով ՀՀ նախագահի որոշ թեկնածուների խնդրում, հնարաւոր է, առաւելապէս կողմնորոշուի կանանց մի տեսակ կամ՝ կնստճ տղամարդկանց մի խումբ: Իսկ եթէ աւելի լուրջ հայեացքով տնտղենք ՀՀ նախագահի թեկնածուների դիմախաղերը, շարժումները, ուշադիր հետեւենք ձայնի տեմբրին եւ առհասարակ՝ առաջին, մէկ է՝ թեկնածուների վերաբերեալ վերջնական կարծիք կազմելու համար արժէ ծանօթանալ նրանց նախընտրական ծրագրերին եւ, մասնաւորապէս, քաղաքացիական հասարակութիւն ձեւաւորելու լօզունգներին: «Քաղաքացիական հասարակութիւն կառուցելու լաւագոյն մօտեցումը տուել է Ներսէս Շնորհալին. «Միասնութիւն՝ գլխաւորում, ազատութիւն՝ երկրորդայինում եւ սեր՝ ամէն ինչում»,- իր նախընտրական ծրագրում իր այս իմացութիւնն է զետեղել Սերժ Սարգսեանը: Նրա նախընտրական ծրագրի նախաբանը հետեւեալն է. «Վերջին 16 տարիներին մեր երկիրն անցել է պետականութեան կայացման բարդ ուղի: Արցախեան ազատամարտից յետոյ, յաղթահարելով նաեւ տնտեսական ճգնաժամը, սոցիալական կոնֆլիկտները, կուսակցական եւ զաղափարախօսական հակասութիւնները՝ մենք կառուցում ենք ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրայ խարսխուած նոր կեանք: Որպէս արդիւնք՝ առաջիմ, իհարկէ, դանդաղ, մեր կեանքը փոխուում է դէպի լաւը: Այսօրուայ մեր անելիքների առանցքն է պետականութեան ամրապնդումը, այնպիսի հասարակութեան կայացումը, որը հիմնաւորականութեան, հանդուրժողականութեան, արդարութեան ու համերաշխութեան վրայ»:

Իրեն իբրեւ երրորդ ուժ ներկայացնող Արտաշէս Գեղամեանը, սակայն, Սերժ Սարգսեանի վկայակոչած համերաշխութեանը հակադրում է պայթիւնավտանգ իրական-

ութիւնը: Պարոն Գեղամեանի նախընտրական ծրագրի ներածութեան մէջ նշուած է. «2007 թ. նոյեմբերի 27-ին կայացաւ «Ազգային Միաբանութիւն կուսակցութեան» նախագահութեան ընդլայնուած նիստը, որտեղ միաձայն որոշուեց նախագահական առաջիկայ ընտրութիւններում երաշխաւորել ինձ որպէս ՀՀ նախագահի թեկնածու: Չթաքցնեմ, որ գործընկերներիս որոշմանը եւ դրան իմ համաձայնութիւնը տալուն մօտեցել եմ ժողովրդիս առաջ պատասխանատուութեան բարձր գիտակցումով, նկատի ունենալով այն բարդ, պայթիւնավտանգ իրավիճակը, որ ստեղծուել է մեր երկրում ու նրա շուրջ...»:

Եթէ նորից կարդաք Սերժ Սարգսեանի նախընտրական ծրագիրը, հնարաւոր է՝ ցրուեն կասկածները, ըստ որոնց, իրավիճակն իսկապէս պայթիւնավտանգ է: «2008 թուականի նախագահական ընտրութիւնները հաստատելու են, որ ընտրական գործընթացների բարեխառնումը եւ ժողովրդավարական ընտրութիւնների անցկացումը Հայաստանում այլեւս աւանդույթ է: Այսօր առաւելապէս պէտք է կենտրոնանանք ապագայի վրայ, չփոշիացնենք մեր կարողութիւններն անցեալի բացթողումների եւ սխալների վերաբերեալ անհարկի բանավէճերում, այլ համագործակցենք ու կառուցողական երկխօսութիւն ծաւալենք այն նպատակների եւ խնդիրների շուրջ, որոնք վերաբերում են մեր ազգային-պետական առաջնահերթութիւններին եւ միտուած են ապագայի կերտմանը:

Հայաստան, որին մենք ձգտում ենք եւ կը հասնենք: Մենք ունենք երկրի զարգացման յստակ ու իրականանալի տեսլական...»:

Լեւոն Տէր-Պետրոսեանն անթույլատրելի է համարում Սերժ Սարգսեանի պատկերացրած Հայաստանին հասնելու ծրագիրը եւ մեր երկրի զարգացման յստակ ու իրականանալի հեռանկարը ներկայացնում է ներկայ իշխանութեան վերադարձութիւնը կասեցնելու պայմանով. «Երկրի «զարգացման» ճանապարհներից մէկն, ահա, իշխանութիւն կոչուած այս քրէական համակարգի վերադարձութիւնն է, ինչը հաւասարազոր է ազգային աղետի: Եթէ վարչախմբին յաջողուի բռնութեամբ, ընտրակեղծիքներով եւ կաշառակերութեամբ եւս տասը տարի երկարաձգել իր գոյութիւնը, ապա պետութեան կորուստներն այլեւս անհատուցանելի կարող են դառնալ: Իր ապագայ գործունէութեան վերաբերեալ ինչպիսի նախընտրական խոստումներ էլ տա նախագահի

պաշտօնին չաւակնող իշխանական թեկնածուն, միեւնոյն է, գործող յանցաւոր համակարգի ճարտարապետներից մէկը լինելու նրա հանգամանքը հաւատ չի կարող ներշնչել այդ խոստումների նկատմամբ», - պատճառաբանում է Լեւոն Տէր-Պետրոսեանը:

«Նորմալ երկրի ուրուանկարը՝ քաղաքական լեզուով» ենթավերնագրի ներքոյ Լեւոն Տէր-Պետրոսեանը թուարկում է. «Սահմանադրական կարգի վերականգնումը, այն է՝ իշխանութեան ձեւաւորումը բացառապէս ազատ ընտրութիւնների միջոցով», «Ներկայ բրգածեւ աւազակապետական համակարգի կազմաքանդումը, օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւնների անկախութեան եւ հաւասարակշռութեան ապահովումը», «Լիարժէք ժողովրդավարութեան հաստատումը, խօսքի, մամուլի, խղճի ազատութեան երաշխաւորումը, բազմակուսակցականութեան եւ պառլամենտարիզմի վերջնական արմատաւորումը», «Քաղաքացիական հասարակութեան ինստիտուտների՝ տեղական ինքնակառավարման մարմինների, արհմիութիւնների, ստեղծագործական միութիւնների, ոչ կառավարական կազմակերպութիւնների ամրապնդումը», «Իրաւապահ մարմինների եւ բանակի՝ քաղաքականութեան մէջ ներքաշուածութեան գոյութիւն ունեցող պրակտիկայի բացառումը», «Վարչական աւելորդ օղակների վերացումը եւ վերջին տասը տարիների ընթացքում անհարկի ոււճացած պետական ապարատի կրճատումը»:

Արտաշէս Գեղամեանն էլ իր ծաւալուն նախընտրական ծրագրում զետեղուած բազմաթիւ խոստումների թուում նշում է նաեւ հետեւեալը. «ՀՀ նախագահ ընտրուելու դէպքում ես ձգտելու եմ ազգային զաղափարախօսութիւնը դարձնել հայոց պետականութեան հոգեւոր հիմք՝ հետեւողականօրէն աշխատելով, որ ազգային զաղափարախօսութիւնն իր դրօշի ներքոյ միաւորի հայ հասարակութեան ազգային բոլոր ուժերը՝ հասնելով համայն հայութեան ընդհանուր նպատակի իրականացմանը, Ազգ-Պետութեան ստեղծմանը»: Գեղամեանը շարունակում է. «Ազգային զաղափարախօսութիւնը կարուկ սահմանափակում է իշխանութիւնների սխալ գործելու հնարաւորութիւնները: Ոչ ոք, ոչ մի խումբ, ոչ մի կուսակցութիւն չպէտք է իրաւունք ունենայ արդարացնելու սեփական սխալները, որոնք խարխուղում են մի ամբողջ ժողովրդի

Շաք.ք էջ 17

The Quality and Safe Choice for Your Child's High School Education
AGBU HIGH SCHOOL – PASADENA
OPEN ENROLLMENT FOR 2008-2009
Grades 9-12
The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.
Please call (626) 794-0363



ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Ամերիկեան ընտրութեանց, աւելի ճիշտը, նախա-ընտրութեանց մասին, առաջին յօդուածը մենք նկարագրեցինք իբրեւ Այովայէն մինչեւ Նիու Հեմփշիր: Անկէ աս- դին անցան շուրջ երկու շաբաթ- ներ, եւ բաւական բան փոխուեցաւ ընհանուր կացութեան մէջ, թէ տեմոքրատ եւ թէ հանրապետական կուսակցութեանց պարագային:


Ընթերցողները կը յիշեն որ Այովայի մէջ յաղթանակ էին՝ Տեմոքրատներու պարագային, Պարաք Օպաման էր առաջին տեղը գրաւողը, իսկ Հիլըրի Քլինթընը՝ երկրորդը, եւ Յրդ տեղը ձոն էտուրրոգը: Միւս կուսակցութեան, հանրապետականներու պարագային, անակնկալ առաջին տեղը գրաւեց Արքանսա նահանգի նահանգապետ, պատուելի Մայք Հուքային, յենած կրօնական մէկ համայնքի մը քուէներուն վրայ, համայնք որ անգլերէն լեզուով «evangelical» կը ճանչցուի: Իսկ Յրդ տեղը գրաւեց Մեսչուսեց նահանգի նահանգապետ Մէթ Ռոմնի: Յրդ տեղը, զարմանալիօրէն վիճակուեցաւ հին ծերակուտական ձօն Մքքէյնի, որ շրջանէ մը ի վեր իր ընտրական արշաւը գրեթէ չնչասպառ եղած էր:

Ի՞նչ պատահեցաւ Այովայէն Նիու Հեմփշիր նահանգ: Ինքնավստահ Օպամա մը, իր յառաջխաղացքը կը յուսար շարունակել, մինչ Հիլըրի Քլինթըն, իր կորստ-ցուցած քայլն ու առաջին տեղը վերագտնելու համար, ոճային, ձայնային եւ հաղորդակցութեան միջոցներու մէջ փոփոխութիւն մտցուց, այս ձեւով ջնջելու համար իր անձին վերագրուած «պղծ խօսողի» հանգամանքը: Ըստ երեւոյթին, այս նոր «թեքնիքը» իր արդիւնքները տուաւ եւ Նիւ Հեմփշիրի ընտրողները իրենց ձայները իր վրայ կեդրոնացնելով, իրեն թիւ մէկ յաջողութիւնը տուին, Պարաք Օպաման Յրդ, իսկ ձօն էտուրրոգ՝ Յրդ:

Իսկ հանրապետականներու մօտ փոփոխութիւն եղան: Այսպէս, ձօն Մքքէյնը, որուն ընտրարշաւը շնչառ-հեղձ կը նկատուէր, զարմանալիօրէն առաջին տեղը գրաւեց, մինչ Ռոմնին մնաց Յրդ տեղը, իսկ Հիլ-քային Յրդ տեղը:

Այովայէն Նիւ Հեմփշիր պիտի յաջորդեն Միչիկը նահանգի, որուն նահանգապետը, եւ «հարազատ գա-

ւակը» նկատուած Միթ Ռոմնին գրաւեց առաջին տեղը, Մքքէյնը Յրդը, իսկ Հուքային՝ Յրդը: Տեմոքրատներու շատ հետաքրքրութիւն ցոյց տուին Միչիկընով, եւ սակայն դասաւորուած շարունակուեցաւ ինչպէս Նիւ Հեմփշիրի պարագային, այսինքն Քլինթըն-Օպամա-էտուրրոգ:



Յաջորդ հանգրուանը կը հանդիսանար Հարաւային Քարոլայն նահանգը եւ հոս եւս տեղի ունեցան կարեւոր փոփոխութիւններ երկու կուսակցութեանց նախագահական թեկնածուներու միջեւ: Մինչ կը սպասուէր որ տեմոքրատներու պարագային, Օպաման շահէր, տրուած ըլլալով նահանգի ընտրողներու սեւերու շուրջ 47 առ հարիւր համեմատութիւնը, դարձեալ յաղթանակ արձանագրեց Հիլըրի Քլինթըն, իսկ էտուրրոգ մնաց Յրդ տեղը:

Հոս եւս զարմանալի եւ անակնկալ յաջողութիւն մը արձանագրեց ծերակուտական ձօն Մքքէյն, եւ այնպիսի տպաւորիչ ճառ մը արտասանեց, որ կարծես ինքզինք կը ներկայացնէր հանրապետական կուսակցութեան նախագահական թեկնածուն: Ի հարկէ այս անակնկալներու պարագաներուն, բազմաթիւ պատճառներ երեւան եկան, որոնք նախապէս կատարուող քուէախոյզներու (polls) նախատեսութեանց հակառակ պիտի երթային: Քլինթընի պարագային, վերը յիշուած պատճառներու վերագրուեցաւ իր ունեցած յաջողութիւնները, այսինքն աւելի մարդկային, աւելի մտերիմ, եւ աւելի ինքնավստահ եւ մանաւանդ փորձառութեամբ աւե-

լի հարուստ: Ի հարկէ իր յաջողու-թեան մէջ, կարեւոր դեր մը կը խաղայ իր ամուսինը, Պիլ Քլինթըն, որ երկու շրջան նախագահի պաշտօնը վարեց, եւ որ բաւական ժողովրդականութիւն ունի սեւ շրջանակներու մօտ, ինչպէս նաեւ յարձակողական խօսքեր արտասա-նեց Պարաք Օպամայի նկատմամբ, այս վերջինին նախագահական ախորժակները «պարիկային հեքիաթ» նկարագրելով:



Ինչ կը վերաբերի ձօն Մքքէյնի չսպասուած եւ անակնկալ յաղթանակին, քանի որ դեռ քանի մը ամիս առաջ, իր ընտրարշաւին աւարտը մօտալուտ կ'երեւէր, զարմանալի վերադարձ մը արձանագրելով, հասաւ ապահով առաջին գծերու վրայ: Ամէն պարագայի, Մքքէյն հակառակ իր հակասական կարծիքներուն, յատկապէս ներգաղթի, հարկային դրութեան, վիժումի, եւ ընկերային այլ հարցե-րու մասին, ան կը թուի յառաջապահ ըլլալ երկրի ապահովու-թեան վերաբերող հարցերուն, եւ Ուաշինկթըն ունեցած իր երկար տարիներու փորձառութեան: Պէտք չէ մոռնալ նաեւ որ, շուրջ 4 տարիներ, Մքքէյն պատերազմա-կան ռազմագետի վիճակին մէջ գտնուած էր Յրդ համաշխարհային պատերազմի ընթացքին, եւ այս

պարագան նաեւ կը նպաստէր իրեն: Նոյնպէս, իր անուրը ծանօթ էր ընտրողներուն, եւ ասկէ 5 տարի-ներ առաջ, պարտուած էր այսօր-ուայ նախագահ Պուշին կողմէ:

Նեվատա նահանգի պարագա-յին ալ, յաղթական հանդիսացան Քլինթըն եւ Մքքէյն, եւ եթէ այս ընթացքը շարունակուի, ըստ երեւոյթին, անոնք պիտի հանդիսա-նան իրենց կուսակցութեանց դրօշակակիրները յաջորդ Նոյեմբերին տեղի ունենալիք նախագահական ընտրութեանց:

Ընթերցողները պիտի հարց-նեն թէ ի՞նչ պատահեցաւ միւս թեկնածուներուն - ծիւլիանի, Հընթըր, Պայտըն, Քուսինիչ եւ ուրիշ-ներ, ինչպէս թոմբսըն: Ներկանե-րուն մէջ, ձօն էտուրրոգ տակաւին կը շարունակէ իր Յրդ տեղը, իսկ այս ցանկէն, ըստ երեւոյթին նաեւ կը հրաժարի թոմբսըն: Ինչ կը վերաբերի ծիւլիանիի, զարմանալի մարտավարութիւն մը որդեգ-րեց ան, մերժելով մասնակցել վե-րոյիշեալ ընտրութեանց: Ան սկիզբէն իր աշխատանքները կեդրոնա-ցուց Ֆլօրիտայ նահանգի վրայ, որ ինք կը յուսայ իր յաղթանակը ապահովել: Այս շաբաթ կը ճշդուի Ֆլօրիտայի ճակատագիրը, կամ կը յաղթէ ծիւլիանի իբրեւ նախագահական թեկնածութեան իր ճիգին մէջ, եւ կամ հրապարակէն կը քաշ-ուի: Կը յիշուի իր պարագային, որ ժամանակ մը առաջ, ինք կը նկատուէր առաջնային դիրքերու վրայ եւ գլխաւոր դէմքը կը հանդիսանար իբրեւ երկրի ապահո-վութեան հետապնդող, մանաւանդ 9/11 ահաբեկչութենէն ետք, երբ գինքը կոչեցին «Ամերիկայի քաղաքապետ»...

Ֆլօրիտայէն անդին եւ աւելի կարեւոր կը նկատուի Փետրուար 5ը, որ կը կոչուի «Super-Duper February», որու ընթացքին տեղի կ'ունենայ 20-է աւելի նահագնե-րու ընտրութիւնը: Այս ընտրու-թեանց ընթացքին, թէ Քլինթըն եւ թէ Մքքէյն կը յուսան վերջ-նական յաղթանակ տանիլ եւ հաս-նիլ Նոյեմբերի ազգային ընտ-րութեանց:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթերօրին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

AAA A.B.A. INSURANCE SERVICES Life, Health, Group Health, Disability, Long Term Care Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California 33th ANNIVERSARY

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՐԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205 E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



## ՄԻ՛ ՅԱՓՇՏԱԿԷ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՋԱՏ ՈՒ ԱՆԿԱՇԱՌ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱԿՈՒՆՔԸ՝ «ԱՅՍ ԱՆԳԱՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ՅԱՂԹԵԼՈՒ»

Բոլոր քաղաքակրթութիւնների օրօք, բոլոր երկրներում ընտրութիւնները պատկանում են ժողովրդին: Անց են կացում միայն ու միայն ժողովրդի համար, ժողովրդի միջոցով: Որպէսզի ժողովուրդը իր կամքը արտայայտի, իր համակրանքը յայտնի այս կամ այն թեկնածուի նկատմամբ եւ առաջնորդ ընտրի:

Եւ հաւատացէք, որ ժողովուրդը ամենաիմաստունն է, եթէ ազատ, անկաշառ ընտրի եւ խարդախութիւնների դէմ յանդիման չկանգնի:

Այսօր Հայաստանը գտնուում է բախտորոշ եւ վճռական վերափոխման շեշտին, եւ պէտք է ժողովրդին թոյլ տրուի ազատ ու անխարդախ ընտրելու իր առաջնորդը, իր ընտրեալը:

Լրատուամիջոցների նկատմամբ բռնութիւնները պէտք է վերացունեն եւ վերջ տրուի միակողմանի քարոզչութեանը, որը ապակողմնորոշում է ընտրողին:

Միթէ՞ «տղամարդ»-կուլթիւնը նրա մէջ է, որ ձեր գոյութիւնը բռնի պարտադրէք ժողովրդին եւ իւրացնէք երկրի բանալին:

Այս ալան-թալանի ճանապարհով գնալը ոչ մի տեղ չի տանում՝ եւ ասպնացել է ճանապարհը փոխելու անհրաժեշտութիւնը:

Հայրենիքում նորմալ ապրելու յոյսը խլուել է ժողովրդից եւ Հայաստանը դատարկուում է հայաստանահայերից: Հասարակութիւնը ձայնագրուել է դարձել: Թոյլ տուէք առանց խարդախութիւնների ժողովուրդը պատմութիւն կերտի, ազատ արտայայտուի: Երկու անգամ վայրագ միջոցներով, անմարդկային արարքներով զսպեցիք ժողովրդի ազատ կամքի իրաւունքը, բողոք-ըմբոստութիւնը՝ ձեր ակներեւ ընտրախախտումների դիմաց, բռնի ուժով ընտրապայքարի թերթիկների քանակը հարմարեցրիք ձեր շահերին:

Դրա անունը ընտրութիւնն է՝ անագնիւ գոռապայտութիւն է - անհավասար պայքար է:

Այս անգամ ժողովուրդն է յաղթելու: Անկախութիւնից յետոյ եղան երանելի ժամանակներ, երբ ժողովուրդը ազգային զարթօնք էր ապրում, երբ ազգի համար ամենաներշնչուած, ամենաբացառիկ օրերն էին:

Երբ ժողովրդի իրաւունքը յափշտակող չկար եւ ժողովուրդը 1991-ին ազատ ու արդար արտայայտեց իր կամքը՝ եւ 83,4%-ի առաւելութեամբ Լեւոն Տէր-Պետրոսեանին իր համար առաջնորդ ընտրեց, այն մեծ ցանկութեամբ, որպէսզի մեր ազատ, անկախ երկիրը կայանայ եւ դատուի քաղաքակիրթ երկրների շարքին: Եւ ինչ վիճակում էր Հայաստանը այդ օրերին՝

1. Արդէն կար աղէտի գօտի,
2. Յետոյ եղաւ տնտեսական անկումը,
3. Երկիրը պատերազմի մէջ էր (աւարտվուց 1994-ին),
4. Շրջափակում,
5. 300.000 փախստականների հոգսը:

Սովետական սիստեմից անկախացած մեր հարեւան երկրները, նոյնպէս տնտեսական անկում ունեցան, եւ ասում էր, որ մեր երկրից վատթար վիճակում են:

Հայաստանի ժողովուրդը ծանր օրեր ապրեց: Բոլոր լծակները քանդուած էին, պէտք էր ինքնուրոյն գոյատեւել: Որեւէ երկրի համար իւրաքանչիւր մեծ փոփոխութիւն, կամ անցումային շրջան սիստեմից սիստեմ՝ ցաւոտ է լինում: Այդ վիճակում նոյնիսկ Նիցշէի «գերմարդը» չէր կարող դուրս բերել երկիրը այդ քաոսային վիճակից:

Ժամանակը պէտք է օգնէր նորընտիր նախագահին՝ կարգի դնելու երկրի սահմանադրութիւնը, կառավարման սիստեմը տնտեսութեան հիմքը եւ այլն: Եւ կառավարութեան ներսի մարդիկ նոյնպէս պէտք է սովորեին ղեկավար յարգել:

Առանց փոխադարձ վստահութեան երեւի թէ երկիր կերտելը անհնար էր. եւ նա վստահեց մարդկանց (եկուոր մարդկանց), որոնք ոչ միայն իր իրաւունքը, այլեւ ժողովրդի իրաւունքը խլեցին, եւ Հայաստանը դարձրին բռնութեամբ առաջնորդուող, մի խումբ մարդկանց տիրապետութիւն:

Երկիրը իր շաւիղից դուրս է եկել, այս ճանապարհով եթէ գնա՝ (պատմական օրինակները ցոյց են տուել) դատապարտուած է փլուզման: Փայլուն եւ անճաշակ խաղալիքներով մի քիւրաբուի՝ հիմքը խախտու է, մեր ազգային յարատեւութիւնը վտանգի տակ է:

Այս անցումային վճռական օրերին ամէն հայ պէտք է իր լուծման դնի եւ հեռուն տեսնի, ոչ թէ սխալ պահից օգտուի:

Մենք ազգովին պէտք է նեցուկ կանգնենք եւ հպարտ լինենք, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի նման ազնիւ, հեռատես, քաղաքագէտ առաջնորդ ունենք, որի նմանը ոչ միայն Հայաստանում, այլ աշխարհում էլ չատ չկայ:

Մենք պէտք է առաջնորդ յարգել իմանանք, ոչ թէ ամէն մէկս առաջնորդի պատմուճանը մեր ուսերին առնենք:

Ազատութիւնը գրհողութիւնների արդիւնք է: Ժողովրդի ընտրեալ նախագահին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանին պէտք է հնարաւորութիւն տրուի շարունակելու իր անաւարտ գործը՝ երկիրը յուսալի հիմքերի վրայ դնելու, հասարակութեան միջին խաւի կեանքը բարելաւելու եւ Հայաստանը դարձնելու աշխարհի դեմոկրատ երկրների ընտանիքի պատուաւոր անդամ:

Օրուայ իշխանութիւնները ժողովրդին գրկեցին իր իրաւունքից, բռնացան տարբեր միջոցներով նրա կամքի վրայ, առժամեայ անպատժելիութիւնը թագաւորեց:

Բայց ժողովուրդը իմաստուն է՝ հաշուեյարդարի ժամը եկել է, անպատժելիութիւնը պէտք է վերջ գտնի, եւ վերջիվերջոյ ժողովուրդը պէտք է հանի ու հեռացնի իր ցաւող ատամը:

«Արդարութիւն» Սփիւռքահայ մտաւորական նոյնախոհների յանձնախումբ:

## ԱՅՍ ՏԱՐԻ ԳԱՌՁՈՒԻ (ԳԱՌՆԻԿ ԶՈՒՆՈՒՄԵԱՆԻ) ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿՆ Է

«Իրանիթի գործարանի տէրերից մէկն էր՝ վահրամ Դաւիթխանեանը, որ ֆրանսական ընկերութեան օգնութեամբ սկսել էին արդիւնաբերութեան իրանում՝ թագաւորական վարչակարգի օրօք, հետագային իսլամական ուժերի հաստատումով գործարանը բռնազրաւուեց եւ տէրերը փախուստ տուին: Վահրամ Դաւիթխանեանը այժմ չկայ, նա մահացել է Ֆրանսիայում, ապրում էր մենակութեան մէջ, երբ Փարիզում այցելեցի իրեն:

Շաբ.ք էջ 19



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**  
 Authorized Independent Agent  
 1807 W GLENOAKS BLVD. #202  
 GLENDALE, CA 91201  
 (818) 502-3233  
 HARUT@EXCELHYE.COM  
 WWW.EXCELHYE.COM  
 CA Insurance  
 License #0B28270



The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

# ՇԱՅԱՍԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԴԱՐՁԸ

ԴՈՒՏ. Տ. ԶԱԽԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ (Շարունակաբանախորհրդի քիւն)

## Առաջին Լուսաւորիչները Թաղու եւ Բարթոլոմէոս Առաքեալներ

Ճիշդ այս վերջին կէտն է որ այժմ պիտի քննարկենք: Ս. Թաղէոս առաքեալի քարոզութիւնը Հայաստան անմիջապէս աղբիւր ունի նոյն առաքեալի Եղեւթա կատարած առաքելութեան հետ, ըլլալով վերջնոյս շարունակութիւնը: Ասորի աւանդութեան մը համաձայն թղթակցութիւն մը տեղի ունեցած է Յիսուսի եւ Եղեւթոյ թագաւոր Աբգար Ե-ի (ՆՔ 4-50 ՔԵ) միջեւ ու նամակները յետագային ամփոփուած են վարդապետութիւն Աղղէի ասորերէն բնագրի մը մէջ: Նոյն նամակները արտագրած են Եւսեբիոս Կեսարացի եւ Մովսէս Խորենացի: Եւսեբիոս, որ իր յայտնի Եկեղեցական Պատմութիւնը գրեց 325 թուին, կ'աւելցնէ որ մեր Տիրոջ Համբարձումէն ետք «Յուդա Թովմաս զրկեց Թաղէոս (Աղղէ), եթանասուն-երկուքէն մին, որ բժշկեց թագաւորը եւ քարոզեց իր ժողովուրդին»: Հայկական աւանդութիւնը շարունակութիւնն է ասորական աւանդութեան, որուն բնագիրը՝ վարդապետութիւն Աղղէի անունին տակ մեր հայ թարգմանիչները հայերէնի վերածեցին Ե դարուն, ուր աւելցուցին հայկական աւանդութեան բաժինը թէ Թաղէոս չմեռաւ Եղեւթոյ մէջ, այլ շարունակեց իր առաքելութեան ճամբան դէպի Արեւելք եւ քարոզեց Քրիստոսի աւետարանը, Լաբուրնիս Նամակ Աբգարի, վեներտիկ 1868: Մովսէս Խորենացի իր տեղեկութիւնը սոյն հայերէն բնագրէն ստացած է, եւ Փաւստոս Բիւզանդ, մեր առաջին հայ պատմիչներէն, ինքն է որ կը գրէ Ս. Գրիգոր Լուսաւորչի ի Հայաստան հաստատած Աթոռի մասին, գալն կոչելով «Աթոռ Թաղէոսի», Փաւստոս Բիւզանդ Պատմութիւն Հայոց : Խորենացի գալն կը կրկնէ ըսելով որ «յետագային Ս. Գրիգոր կատարեց Թաղէոսի մնացած անաւարտ գործը»:

Երկու հայ պատմիչները՝ Խորենացի եւ Բիւզանդ կը հաւատան թէ Ս. Թաղէոս նահատակուեցաւ հայոց Սանատրուկ թագաւորի հրամանով եւ ցոյց կուտան Արտագի Աթոռը որպէս սրբավայր գերեզմանը Թաղէոսի: Արտագի Աթոռը պահած է իր առաքելական յաջորդականութիւնը, որուն հսկած են իրենց անուններով ծանօթ եօթը եպիսկոպոսներ յաջորդաբար մինչեւ Բ դարու վերջը: Արտագի աթոռի առաքելական սոյն յաջորդականութիւնը ստուգուած է յիշեալ եօթը եպիսկոպոսներու յաջորդներէն մէկուն անունովը՝ Մեսրոպեան եպիսկոպոսի, որուն մասին կը խօսի Եւսեբիոս Կեսարացի յոյն պատմաբանը: Վերջինս կը մէջբերէ նամակ մը «Վասն Ապաշխարութեան» վերնագրով, որ գրուած է 254 թուականին Աղբաւանդրիոյ Դիոնիսիոս պատրիարքի կողմէ եւ ուղղուած Հայաստանի Ծոփք նահանգի Մեսրոպեան եպիսկոպոսին, Եւսեբիոս Կեսարացի Եկեղեցական Պատմութիւն, գլուխ 6-րդ: Կարեւորութեամբ նկատելի է այստեղ Մեսրոպեանի պաշտօնական դիրքն ու հայոց եկեղեցական Աթոռի Հայաստանի Ծոփք նահանգին մէջ ըլլալը՝ այս անգամ հաստատուած Աղբաւանդր-

իոյ երրորդ դարու յոյն պատրիարքի մը կողմէ: Իսկ հայ մարտիրոսագրութիւնը իր կարգին կը յիշատակէ հայ նահատակներ, ինչպէս Սանդուխտ կոյս՝ Սանատրուկ թագաւորի դուստրը, նաեւ Զարմանդուխտ, Սամուէլ եւ Իսրայէլ աստրապները, եւ այլ հազարներ, որոնք նահատակուած են Ս. Թաղէոսի քարոզութեան ատեն:

Հայ քրիստոնէութեան ծագումին հետ կապ ունի նաեւ Բարթոլոմէոս առաքեալի քարոզութիւնը: Ան Յիսուսի տասներկու աշակերտներէն մին էր որ Հայաստան գալով անցաւ Գողթն, Հեր եւ Զարեանդ գաւառներէն, նոյն Սանատրուկ հայոց թագաւորի օրով: Բարթոլոմէոսն էս նահատակուեցաւ Մեծ Հայքի Ուրբանուպոլիս քաղաքին մէջ, եւ կամ Խորենացիի յիշած Արեւբանոսի մէջ: Աւանդական Աղբաւը Հայաստանի հարաւ-արեւելքը ցոյց կը տրուի որպէս Առաքեալի նահատակման վայրը: Գոնէ երկու նահատակներ, ի շարս այլ բազմաց, անունով ծանօթ են՝ Ոգուհի արքայաքոյր եւ Տերենտիոս զօրավար, որոնք հետեւեցան Բարթոլոմէոսի: Բարթոլոմէոսն առաքեալին յաջորդականութիւնն ալ նուիրագործուած է իր ձեռնաստեղծի՝ Կոմմսիի եւ անոր յաջորդող ութ եպիսկոպոսներով, որոնք Միւնիքի մէջ նստած են ու հիմնած Հայաստանի երկրորդ աթոռը՝ Արտագի կողքին: Այդ երկու աթոռներու եօթ եւ ապա ութ եպիսկոպոսներու յաջորդական գոյութիւնը Հայաստանի մէջ քրիստոնէական շարժումը կը հասցնեն մինչեւ Գ դարու առաջին քառորդը՝ 225 թուականը:

Այս բոլոր տուեալները կ'ապացուցանեն որ Հայաստանի մէջ քրիստոնէութեան անպաշտօն եւ քօղարկուած գոյութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչէն առաջ անաւարկելի եղած է, նկատի առած երկու առաքեալներու Եղեւթոյ վրայով Հայաստան գալու գորցը, Հայաստանի Մեսրոպեան եպիսկոպոսի պատմական անձ մը ըլլալը, նահատակներու յանուանէ յիշատակութիւնը, որոնք բոլորը հիմը կազմեցին աւելի զօրաւոր շարժումի մը որ ծանօթ է որպէս Պետական Դարձը հայոց Ս. Գրիգորի եւ Տրդատ Գ թագաւորի ձեռամբ:

## Հայաստանի Քրիստոնէութեան Դարձը

301 թուականը կանխող քաղաքական կարեւոր դէպքն էր Պարսից եւ Հռոմէականաց պատերազմը Հայաստանի տիրապետելու միտքով, որ յանգեցաւ 298 թուի դաշնագրութեան ընդմէջ Դիոկղետիանոս կայսեր եւ պարսից Ներսէս արքայի: Հայաստան, համաձայն կնքուած դաշինքին, ենթակայ մնաց Հռոմի: Սպաննուած Խոսրով Բ հայոց թագաւորի որդին՝ Տրդատ Գ հայոց գահին տիրացաւ 287 թուին նոյն Դիոկղետիանոս կայսեր հաւանութեամբ եւ կեդրոնական դէմքը հանդիսացաւ Ս. Գրիգորի հետ հայոց դէպի քրիստոնէութիւն դարձին մէջ: Մեր Ազգայնագետ պատմիչն է միակը որ մանրամասնութեամբ կը գրէ ճիշդ հարիւր տարուան (226-325 թ.) պատմութիւնը, նախընթացն ու հետեւանքը այս մեծագոյն դէպքին՝ Հայոց Դարձին:

Ազգայնագետի պատմութիւնը մեզի կուտայ ծանօթ մանրամասնութիւններ թէ ինչպէս Խոսրով Բ հայոց թագաւորի սպաննիչ Անակի

մանկիկը՝ Գրիգոր, եւ Խոսրովի մանկիկը՝ Տրդատ կ'ազատէին տոհմական կռիւներէն ու կը դաստիարակուէին, առաջինը Կապադովկիոյ Կեսարիա քաղաքին մէջ, ուր անքրիստոնէայ կը դառնար, իսկ երկրորդը՝ Պարսկաստանի մէջ, ուր կը կրթուէր որպէս ապագայ Արշակունի թագաւորը հայոց: Գրիգորի ամուսնութիւնը Մարիամի հետ տեղի կ'ունենար մերձաւորաբար 261 թուականին, եւ իրենց երկու որդիներուն՝ Վրթանէսի եւ Արիստակէսի ծնունդէն ետք, կը բաժնուէին իրարմէ 267 թուին, ինչպէս կը պատմագրէ Մովսէս Խորենացի իր երկի երկրորդ գլուխին մէջ:

Ազգայնագետը կը հաղորդէ նաեւ որ Գրիգոր Հայաստան կը մեկնէր 285 թուականին եւ արքունիքին մէջ ծառայութեան կը մտնէր Տրդատ թագաւորի հրամանով: Իսկոյն երկուքին միջեւ հակառակութիւն կը ծագէր, յայտնի ըլլալով Գրիգորի քրիստոնէայ ըլլալը: Գրիգոր անտանելի չարչարանքներու կ'ենթարկուէր թագաւորին կողմէ, եւ ի վերջոյ Արտաշատի Խոր Վիրապին մէջ կը բանտարկուէր: Հոն մեռած կը կարծուէր, եւ սակայն 13 տարինը ետք ողջ կը գտնուէր ու կը բժշկէր հիւանդ Տրդատ թագաւորը, պատճառ դառնալով անոր եւս քրիստոնէայ մկրտուելուն: Այս ձեւով կարելի կը դառնար նաեւ Հայաստանը դարձի բերել դէպի քրիստոնէութիւն:

## Գրիգոր Լուսաւորիչ Կարողիկոս Էջմիածին՝ Մայր Տաճար Հայոց

Յաջորդ կարեւոր դիպուածը երկու երես ունէր: Նախ՝ Լուսաւորչի տեսիլքով հիմնադրուած հայոց Մայր Եկեղեցին՝ էջմիածին, վաղարշապատ մայրաքաղաքին մէջ, եւ երկրորդ՝ Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելը Կեսարիոյ մէջ ուր նախապէս

անձ էր որպէս քրիստոնէայ: Ազգայնագետը գեղահիւս կերպով եւ հիանալի մանրամասնութեամբ կը նկարագրէ Ս. Գրիգորի տեսիլքը որ հրաշապատուած պատկերացումն է հայոց Մայր Եկեղեցւոյ հիմնադրութեան: Տեսիլքին տուն տուող դէպքը Միածին Որդիին էջմիածին է ի Հայաստան որ իր կարգին, աւելի ուշ անունը դարձաւ Մայր Տաճարին ու Մայր Աթոռին, դառնալով կեդրոնը հոգեւոր վերին իշխանութեան:

Մինչեւ հոս Գրիգոր տակաւին աշխարհական քարոզիչն էր Հայաստանի: Թագաւորն ու արքունիքը, արդէն քրիստոնէութիւնը որպէս առաջինը պետական կրօն յայտարարած, անհրաժեշտ գտան որ Գրիգոր երթար եւ մերձաւորագոյն եպիսկոպոսն էր քահանայական եւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանար, ու Հայաստան վերադառնալով կազմակերպէր Հայոց Եկեղեցին առաքելական լրիւ իշխանութեամբ: Գրիգոր հանդիսաւորապէս Կեսարիա երթալով Ղեւոնդիոս եպիսկոպոսի ձեռքով եւ ի ներկայութեան այլ եպիսկոպոսներու կը ձեռնադրուէր որպէս առաջին եպիսկոպոսը Մեծ Հայքի: Ազգայնագետը իր Պատմութեան մէջ պահած է պատճենները այն նամակներուն որոնք փոխանակուած էին Տրդատ թագաւորի եւ Կեսարիոյ Ղեւոնդիոս եպիսկոպոսի միջեւ ի մասին Գրիգորի ձեռնադրութեան: Վերադարձին Գրիգոր կը մկրտէր Տրդատն ու Աշխէն թագուհին, Խոսրովի դուստր իշխանուհին, եւ «աւելի քան չորս միլիոն ժողովուրդ» Եփրատ գետին եզերքը:

Գրիգոր իսկոյն կը ճանչցուի որպէս «Կաթողիկոս» թէ՛ Ազգայնագետի եւ թէ՛ Փաւստոս Բիւզանդի կողմէ որոնք կը խօսին Գրիգորի մասին որպէս «առաջին կաթողիկոս Մեծ Հայքի» (Ազգայնագետ ԺԳ., Փաւստոս Գ. գլ. 10): Քսանհինգ տարի շարունակ Գրիգոր Լուսաւոր

Շար.ք էջ 19

## MELODY INTERNATIONAL MUSIC SCHOOL Inc.

### ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ



Happy New Year  
Join Our New Music School in Pasadena  
By Experienced & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels

Professional Digital Recording studio  
for all your audio recording needs

**1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104**  
Phones: (626) 797-8867 & (818) 599-1606  
and  
**334 N. Central Avenue Unit 202**  
Glendale, CA 91203  
Phones: (818) 244-8244 & (818) 599-1606  
Visit us at: [www.musiclessons4u.com](http://www.musiclessons4u.com)



ՀԱՄԱՐՈՂԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԹԵՐԱՆՈՒՄ

Ն. ՏԷՐԵԱՆ (Շարունակաբանական խորհրդի քննարկ)

Ինձ առիթ ստեղծուեց շատ կարճ ժամանակի համար լինել Թեհրանում: Կեցութեանս ժամանակը շանը շատ սեղմ լինելու պատճառով, հնարաբար թիւն հունեցայ հանդիպելու իմ մտերիմներին, ընկերներին, կամ այցելելու դպրոցներ եւ հայկական զանազան հիմնարկներ: Բայց իմ երկար տարիների ընկեր,

Նախկին դասարանները նորոգումներից յետոյ յանձնուած է քաղաքի համալսարաններում սովորող հայ ուսանողներին:

Ղազարի հայոց գերեզմանատունը որն հարիւր տարի առաջ է հիմնադրուել եւ գտնուած է քաղաքի հիւսիսում, վերջին տարիներին Քաղաքապետարանի կողմից արգելուել է օգտագործել: Դրա դիմաց հայ եւ ասորի համայնքներէն քաղաքի հարաւային մասում յատկացուել է մի



Ղազարի Ա. Հոփսիմէ եկեղեցին

գրող, ժրջան եւ հայրենասէր որդին՝ Մերուժան Վարդանեանը մեծապէս օգնեցին ինձ, մի քանի ժամով մեկնել Ղազարին, որտեղ անցել են իմ կեանքի յիսուն տարիները: Ղազարիում ուղղակի գնացի եկեղեցի, որն այժմ գտնուած է շատ պայծառ վիճակում, շորհիւ տեղի եկեղեցական խորհրդի եւ մասնաւորաբար եկեղեցու ազնիւ գործակատար՝ Արշամ Խորոյեանի անդուշանքերի: Այսօր շատ քիչ թւով հայ ընտանիքներ կան Ղազարում: Ազգային «Բաֆֆի» դպրոցը փակուած է, սակայն շաբաթական մէկ օր մի խումբ հայ երեխաների հետ հայե-

մեծ տարածք (6000 մեթր) որպէս գերեզմանատուն: Թեմական Խորհրդի որոշմամբ, բոլոր շիրմաքարերը եւ ննջեցեալների աճիւնները փոխադրուել եւ տեղադրուել են նոր գերեզմանատանը:

Գոհ եւ բաւարարուած թողինք երբեմնի հայաշատ Ղազարը, այն համոզումով որ նորից պիտի բազմանայ հայ ընտանիքների թիւը, եւ աշխուժանայ այս հինաւուրց համայնքի կեանքը:

Թեհրանում հնարաւորութիւն ունեցայ, (միշտ եւ միշտ իմ ընկերների օգնութեամբ) գնալու «Դուլաբ» եւ «Նոր Բուրաստան» գերեզ-



«Բաֆֆի» դպրոցը

րէն է պարապում օր. Քարմէն Խորոյեանը: «Բաֆֆի» դպրոցի դասարանները եւ սրահը (որոնք կառուցուել են հարիւր տարի առաջ) անցեալ տարի թեմակալ Առաջնորդ Տ. Սեպուհ Սրբազանի առաջարկութեամբ եւ Թեհրանի հայոց թեմական Խորհրդի միջոցով եւ նիւթական ներդրումներով հիմնովին նորոգուել են: Սրահը անուանուել է Ղազարի կէս դարու նուիրեալ հոգեւոր հովիւ, տեղի Ս. Հրեփիմէ եկեղեցու, ինչպէս նաեւ եկեղեցուն կից բնակարանի կառուցմանը աստարող՝ հոգեւոր Տ. Յարութիւն Ա. Քհնյ. Բալայեան- Տ. Մեսրոպեանի անուամբ:

մանատները, խոնարհելու մեր հարազատների շիրմների առջեւ եւ խունկ ծխելու: Երկու գերեզմանատները գտնուած էին շատ լաւ վիճակի մէջ: Ամէն ինչ տեղին էր, յատկապէս մեքենաներին յատկացուած կանգաւոր, որ անհրաժեշտութիւն էր վաղուց ի վեր:

Թէեւ ժամանակը կարճ էր, բայց կարողացայ հանդիպել Իրան-Հայաստան առեւտրական պալատի նախագահ, «Հայ Դպրոցի Օգնութեան հիմնադիր, «Յոյս» երկշաբաթաթերթի արտոնատէր՝ Լեւոն

Շար.բ էջ 17

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՈՒՍՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՉԻՆԱՌԻՄԱՅԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՐԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ



Ձինսուրայի Ս. Յովհաննէս եկեղեցին

Յունուարի 13-ին, Յիսուս Քրիստոսի անուանակոչութեան սօնին, արդէն իսկ երկար տարիներ ամբարգրուած աւանդութի համաձայն՝ ուխտի Ս. Պատարագ մատուցուեց Ձինսուրայի Ս. Յովհաննէս հայկական եկեղեցու մ: Այն Արեւմտեան Բենգալիա նահանգի երկրորդ ամենահին քրիստոնէական եկեղեցին է՝ կառուցուած 1695 թ.: Յաւոք, այսօր այլեւս հայեր չեն ապրում Ձինսուրայում, եւ նմանատիպ ուխտագնացութիւնների միջոցով փորձ է արւում հայկական եկեղեցում կրկին աղօթք հնչեցնելու եւ ազդարարելու հայ քրիստոնեայի ներկայութեան մասին:

Օրուայ պատարագին էր հնդկահայոց հոգեւոր հովիւ եւ կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գիւլգիւլեանը, որին ընկերակցում էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան Յարութիւն սրկ. Համբարձումեանը: Ս. Պատարագի ընթացքում Հայր Սուրբը յաւուր պատշաճի քարոզ խօսեց՝ ընդգծելով Հնդկաստանում մեր նախնեաց թողած ժառանգութեան պահպանման եւ հնդկահայ գաղութի վերածննդի անհրաժեշտութեան մասին:

«Այսօր կրկին մեր նախնեաց օրինակով ուխտի ենք եկել հոյակերտ այս եկեղեցին՝ եւս մէկ անգամ հաղորդ դառնալու Սուրբ Պատարագին, աղօթելու մեր եկեղեցու անասանութեան եւ հնդկահայ գաղութի սակավաթիւ անդամների համար: Քանզի այդ անդադրուած աղօթքով են ապրել եւ զօրացել հնդկահայերն իրենց հայրենիքից այդքան հեռու, եւ նոյն աղօթք հրաշքն է, որ պահում է մեզ այս հիւրընկալ հողի վրայ՝ դեռեւս կառչած մեր արմատներին», - հնչեց Օշական վարդապետը:

Այս ուրախալի առիթով կալկաթայի Ս. Նազարէթ հայկական եկեղեցուց դուրս էր բերուել նաեւ Ս. Յովհաննէս Մկրտչի մատուցով Ս. Աջը, որով եւ Ս. Պատարագի ընթացքում կատարուեց անդաստան:

Յաւարտ Ս. Պատարագի կատարուեց հոգեհանգիստ եկեղեցու բակում թաղուած հայորդիների հոգիների հանգստութեան համար, որից յետոյ ներկաները մօտեցան եւ համբուրեցին սրբազան մասունքը:

Ուխտագնացութեանը մասնակցում էին կալկաթայի եկեղեցական վարչութեան անդամները, հնդկահայեր եւ Մարդասիրական ճեմարանի սաները:

**ԲԱՑՈՒԱԾ Է**  
Հիպնոսաբուժութեան կեդրոն  
ղեկավարութեամբ՝ Փորձառու բժիշկ  
Արթին Սաղրեանի  
Փասատիմայի մէջ  
Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն  
մինչեւ կ.ե. ժամը 3:00  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E  
Pasadena CA 91104  
Հեռախօս (818) 434-8118  
միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.  
- Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերննշում, շաքարախտ, ազմա, Եւայլն:  
- Մոլութիւններ - սիկարէթ, ալիոլ, քմրադեղեր, Եւայլն:  
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անհանգիստ, Եւայլն:  
- Մանուկներու յատուկ վիճակներ - ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, Եւայլն:  
- Ուսումնական եւ սրտքային բարելաւում



# ՇԱՄԱԿԱՐԳԻՉԻՆ ՕԳՈՒՏՆ ՈՒ ՎՆԱՍԸ

## ՀԱՅԿՆԱԳՎԱՇՆԱՆ

Համակարգիչի (computer) դար է շնորհիվ անոր շատ բան դիւրացուցած է գրական, մշակութային եւ առհասարակ գրասենեկային աշխատանքներու մէջ: Փոստ-հեռագրական բազմապիսի ծառայութիւններ ժամանակավրէպ դարձան համակարգիչի ելեկտրոնային արագ սպասարկութեամբ: Աշխարհի տուեալ մէկ կէտէն դրկուած պատգամ մը, նամակ կամ երկար տեղեկագիր մը համակարգիչի գրամեքենային վրայ քանի մը կոճակ կոխելով, երկվայրկեանային արագութեամբ կը հասնի աշխարհի ամենահեռու որեւէ տեղը: Սա շատ կարեւոր եւ օգտակար յառաջդիմութիւն է մարդկային քաղաքակրթութեան համար: Պայմանաւ որ զայն օգտագործողները՝ թէ զրկող եւ թէ ստացող, ունենան այդ գործիքը: Այսինքն, բաւական խոշոր գումար պէտք է յատկացնեն համակարգիչ մը եւ իր յարակից մասերը գնելու համար, բաժանորդագրութեան յատուկ վճարում մըն ալ կատարելով այդ ծառայութիւնը մատուցող ընկերութեան:

Չկայ մարդ մը, ուր համակարգիչը օգտակար ծառայութիւն չմատուցէ: Հանդէս, համերգ, սինեմա, մարզական խաղ եւ որեւէ հաւաքական ժամանցի համար տո՞մս կ'ուզէք, համակարգիչը այդ գործը կ'ընէ ձեզի համար, ճամբորդութիւն կ'ուզէք ընել՝ ձեր տոմսերը կրնաք ապահովել համակարգիչի վրայ: Զուարճութեան, հանգիստի, կամ գործի համար ձեր երթալիք տեղին մէջ պանդոկի կամ տան վարձումը կրնաք կատարել համակարգիչով: Եւ տակաւին՝ ինչ-ինչ բաներ: Այս բոլորին վրայ մշակութային անսահման ծառայութիւն եւս կը մատուցէ համակարգիչը՝ անոր վրայ կարդալով որեւէ թերթ կամ գիտէք, եթէ անոնք «մտած» են այդ ըրութեան մէջ, եւ եթէ համացանց (internet) ալ ունիք համակարգիչին վրայ:

Եւ ահա, վերջին այս ծառայութեան հետ կը ծագի համակարգիչին օգուտին ու վնասին հարցը: Օգտակար է այն իմաստով որ ուզողը, առանց ծախսի, կրնայ թերթ կամ գիրք կարդալ անոր վրայ: Իսկ ո՞վ պիտի վճարէ այդ գիրքերու ու թերթերուն հրատարակութեան, հեղինակային եւ առաջման ծախսերը:

Վերջին տարիներուն շատցած են թերթերու բաժանորդագրութեան հրաժարողները: Ինչ պէտք կայ աւելորդ ծախս ընելու, երբ

համացանցի վրայ կը գտնէ գինք հետաքրքրող թերթերը: Բայց հարցը հոս չի վերջանար, առանց ծախսի՝ ձրի թերթ ստացողներն ալ սկսած են հրաժարիլ այդ սովորութենէն: Բարեկամ մը՝ որ սովոր էր պարբերաբար իմ ստացած թերթերս տանելու հրաժարեցաւ այդ սովորութենէն, որովհետեւ նոյնիսկ ձրի թերթի պէտք չունէր իր ընթերցասիրութիւնը գոհացնելու համար: Համացանցին վրայ կը կարդար իր ուզած թերթերը:

Ուրեմն, կեցցէ՛ համակարգիչն ու համացանցը:

Բայց, ինչ պիտի ըլլայ վիճակը հայ թերթերուն, որոնք նիւթական ու բարոյական մեծ գոհողութիւններով կը հրատարակեն: Այս

ընթացքով հայ թերթերու ընթերցողները պիտի պակսին: Պակասած են արդէն: Զանոնք ձրիօրէն տրամադրելն ալ լուծում չէ: Ինչ է ուրեմն լուծումը համակարգիչի գործածութեան, որ մէկ կողմէն օգտակար՝ իսկ միւս կողմէ վնասակար է:

Այս կացութեան մէջ մտահոգիչ է մեր թերթերուն ներկայ վիճակն ու ապագան: Եթէ լուծում մը չգտնուի, իսկ այդ լուծումը համակարգիչին հրաժարելն է, թէ թերթերու ընթերցանութեան հրաժարիլը: Ի հարկէ, համակարգիչի բազմապիսի ծառայութիւններէն կարելի չէ հրաժարիլ ի նպաստ հայ թերթ կարդալու, հետեւաբար, հայ թերթերու ընթերցողները տրամաբանօրէն, հետզհետէ պիտի նօսրանան՝ աւելի եւս մտահոգիչ դարձնելով անոնց ապա-

գայ վիճակը: Հայ թերթերու ընթերցող մնացած են անոնք, որոնք համակարգիչ ունին, կամ չեն գիտեր զայն գործածել: Բայց, այս իրականութիւնը չերաշխաւորեր հայ թերթերու ապագան, քանի որ, համակարգիչը պիտի շարունակէ իր յաղթական յառաջընթացը ի վնաս հայ թերթին ու գիրքին: Ուրուագծուող այս տխուր կացութեան առաջքը առնող ոչ մէկ հաւանականութիւն չի նշմարուիր, քանի որ չկայ ոչ մէկ հրատարակչական տուն, որ ստանձնէ հայ գրաւոր մշակոյթի հրատարակութիւնը, միաժամանակ, նիւթապէս եւ բարոյապէս քաջալերելով հայ գրական անդաստանի մշակները:

Յաջորդին՝ հրատարակչական տուն մը հիմնելու կարելութիւնն ու անհրաժեշտութիւնը:

## International Academy of Los Angeles Presents An Evening Honoring Composer, Director & Pioneer of Armenian Television **SARKY MOURADIAN**



- Manuel**
- Kevin George**
- Chuko**
- Andre Danik**
- Narine Shahbazian**
- Salpi Mayelian**
- Hovik Krikorian**
- Harut Hakopian**
- Jenny Armen**

- Flora Martirosian**
- Adiss Harmandyan**
- Vatche**
- Hovik Grigorian**
- Levon Sevan**
- Maxim**
- Raffi Khardalian**
- Razmik Mansourian**
- Armen Aloyan**

Hosts: Anahit Martirosian, Aramayis Gharibyan, Nouné Serobian

Thursday, April 10, 2008, 7:30 p.m.

**ALEX THEATER**

216 North Brand Blvd., Glendale, California 91203

**FOR TICKETS CALL: (818) 913-2299  
(818) 265-0506**

FOR INFORMATION CALL: (818) 243-5722

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
(200 ՀՈԳԻՒ ՇԱՄԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՇԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680**



### ՇԱՐՈՒՆԱԿՈՒԱԾ ԷՋ 5-ԷՆ

անվտանգութիւնը, նրանց, ովքեր խաբուած են»: Առհասարակ Գեղամեանի նախընտրական ծրագիրը յազնեցած է անցեալի սխալների հետեւանքների վերլուծութեամբ:

Թեկնածուների նախընտրական ծրագրերը կարեւոր են նաեւ ԼՂՀ խնդրի կարգաւորման մոդելների յստակեցման իմաստով: Լեւոն Տէր-Պետրոսեանն իր ծրագրում առանձնացրել է «Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործում քաղաքական կամքի դրսեւորումը, հանդէս գալով արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան եւ հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից»:

Սերժ Սարգսեանի ծրագրում ԼՂՀ խնդրի կապակցութեամբ նշուած է. «Արցախեան հիմնախնդիրը լինելու է ՀՀ Նախագահի գործողութիւնների կիզակէտում: Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման հարցը խարսխուելու է հետեւեալ սկզբունքների վրայ. պէտք է միջազգայնօրէն ճանաչուի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը եւ պայմաններ ստեղծուեն դրա իրականացման համար, պէտք է ապահովուի ԼՂՀ բնակչութեան եւ սահմանների անվտանգութիւնը, ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն պէտք է ունենան ընդհանուր սահման»:

Արտաշէս Գեղամեանն իր նա-

խընտրական ծրագրում կրկնում է Լեւոն Տէր-Պետրոսեանի մտայնումը, ըստ որի՝ հակամարտող կողմ են ԼՂՀ-ն եւ Ատրպէյճանը: Ահաւասիկ Գեղամեանի նախընտրական ծրագրի՝ ԼՂՀ խնդրի կարգաւորման վերաբերեալ ամփոփ դիրքորոշում արտայայտող մէջբերում. «ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգաւորումը պէտք է կայանայ ազգերի ինքնորոշման, մարդու իրաւունքների պահպանման գերակայութեան ճանաչման շրջանակներում,

-հիմնահարցի խաղաղ կարգաւորման հիմքում պէտք է դրուեն միջազգային իրաւունքի բոլոր սկզբունքներն ու նորմերը,

-հիմնահարցի խաղաղ կարգաւորման, ԼՂ կարգավիճակի որոշման եւ ոչ մի պայմանաւորութեամբ չի կարող լեզուի միջամարտել առանց ԼՂՀ օրինական ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած իշխանութիւնների լիարժէք մասնակցութեան եւ հաւանութեան,

-փոխզիջումների հիմքում պէտք է դրուեն հակամարտող կողմերի՝ ԼՂ եւ Ատրպէյճանի իշխանութիւնների պայմանաւորութիւնները,

-Հայաստանն ու Ատրպէյճանը միմեանց նկատմամբ չունեն տարած քայլին պահանջներ,

-ԼՂ հակամարտութիւնը կարգաւորող բանակցային գործընթացի ընդունելի համակարգող է շարունակում մնալ ԵԱՀԿ Մինսկի խումբը»:

### «ՄԱՍԻՍ» ՀԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԻՐ 28-ՐԴ ՏԱՌՈՒԱՆ ՍԵՄԻՆ

Շարունակուած էջ 1-Էն

րէն արձանագրուող գործընթացները, անտեսուեցնելով գեղծումները...: Ու պայքարեցաւ անուց դէմ:

Ցաւ էր «Մասիսին» համարանկախութեամբ ետք շոշափելի օրէն տեսնել իր ժողովուրդին ժառանգ ինկած աշխարհով մէկ ծանօթ հոն տիրող աղիատութիւնը, բարոյական արագախրու մեները, արագախրաւոր կեղեքումները, բոնատիրական համակարգը, անկարելի դարձած լինելիութիւնը՝ իր հարազատ հողին վրայ...:

Հին օրերու ներգաղթը՝ փոխարինուած էր ներկայ օրերու Արտագաղթով: Երէկի Հայոց Ցեղասպանութեան նախնայական, դատաւարական եւ հատուցման մեր ազգային պահանջատիրութիւնը, դարձաւ այսօրուան, իրենց աքոռներուն փարած մեր ներկայ վարիչներու շրթներուն թառած վերքերուն պէտքը...:

Ան պայքարեցաւ երկրէն ներս տիրող բոնատիրական, հակաօրինական, երկրի հարստութիւնները թալանող ֆանդիշ երեւոյթներու դէմ: Արդարութեան ճայները նշող բոնամիջոցներու դէմ: Միշտ մնաց պաշտպան՝ կառուցողական, ժողովրդավար եւ արդարադատ պահանջատիրութեան շինարար դիրքերու, որոնք կրկնային ապահովելու սաւոր ապագայ մը:

«Մասիս» չքաւարարուեցաւ իր կատարած քննադատութիւններով: Ան իր կարգին, որդեգրեց ժողովրդական հսկայածաւալ գանգուածներու առջեւ քաջուող քախտորոշ ուղիները, որոնք դուրս պիտի բերէին անկախ կացութեան մատնուած իր հայրենիքը: Պիտի վերահաստատուէր արդարութիւնը, արդարադատութիւնը, ժողովրդավարութիւնը եւ կեանքի ապահովութիւնը: Արդարեւ, հրամայական էր միանգամայն միշտ հեռացնել ներկայ վիճած իշխանութիւնը, որուն քացած վերքերը տարիներու կը կարօտին սպիկապելու համար:

Ինչ տարողութեամբ ստեղծուող գլոբալ ըլլան պատկան իշխանութիւններու խոստովանողները, մուկնեղիները, վարկաբեկելու համար անոր անհատականութիւնն ու պետական անցեալը՝ «Մասիս», ինչպէս անցեալին, եւս ներկայիս, Հայաստանի առաջին Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վրայ դրաւ իր վստահութիւնը, այն հաստատ

համոզումով, որ իրմով սկսած անկախ Հայաստանի քախտորոշ կեանքը պիտի վերքերնուի կրկին:

«Մասիս» ջերմօրէն գորավիզ կանգնեցաւ հերոսական Արցախի ինքնապաշտպանութեան եւ ազատագրական պայքարի յաղթական երթին:

Իր ունեցած հնարաւորութիւններու սահմաններուն մէջ, ան թիկունք կանգնեցաւ անոր կառուցողական գործընթացներուն: Մշտապէս արձանագրեց հոն արձանագրուող դրական նախնականութիւններուն: Քաջալեր հանդիսացաւ հայ Սփիւռքին, որ նիւթապէս, բարոյապէս եւ կազմակերպչական օրէն օժանդակէ անոր վերականգնումի գործընթացներուն: Հաւատացանոր նուիրական առաքելութեան:

Ինչպէս Հայաստանի պարագային, «Մասիս» կողմնորոշուեցաւ ի խնդիր Արցախի Հանրապետութեան միջազգային նախաձեռնումի եւ գոյութիւն ունեցող հիմնահարցերու քարտուղիութեան համար տեղի ունեցող բանակցութիւններուն իր մասնակցութեան հրամայականին: Հաւատացաւ այդ իրաւունքի անձեռնմխելիութեան: Ի վերջոյ, Արցախի հերոսական ժողովուրդին կը պատկանէ իր երկրի ապագայ կառոյցը տնօրինելու վերջին խօսքի իրաւունքը, անկախ այն հանգամանակէն, թէ ինչ կրկնուի մտածելու ուղիները...:

Սյո թոյրէն ետք, միջազգային գետնի վրայ, «Մասիս» բարոյապէս, այլ հետեւողական օրէն գորակցեցաւ այն թոյր շարժումներուն, որոնք կը պայքարէին յանուն մարդկութեան քարօք կեանքի ստեղծումի, ժողովուրդներու միջեւ խաղաղ գոյակցութեան հաստատման, անի-րաւուած ժողովուրդներու ազգային տեղեկներու տնօրինումի եւ աշխարհի խաղաղութեան կենսագործումի:

Անցեալի դժուարին 27 տարիներու յաղթահարումը, «Մասիս» համարեց իր պաշտպանած անսակարկելի եւ անսայթափ կրքունակներուն յաղթանակը: Հայարտ է «Մասիս», որ իր ծաւալած մօտ երեք տասնամեակայան վերու թիւնը պիտի շարունակուի: Սյո առաքելութեան պահպանման ու շարունակման գրաւականը կը կազմէ «Մասիս» ի հրատարակութեան 28-րդ տարուան սեմին լոյս տեսնող ներկայայտութիւնը:

Բարի մոր երթ «Մասիս» շաքաքերքերին:

### ԳԱՌՁՈՒ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿՆ Է

Շարունակուած էջ 7-Էն

եայ ցուցահանդէսին արժանացած է Ազգային կրթութեան նախարարութեան «Մեծ մրցանակ»-ին: 1958 թ.՝ «Եւրոպա» մրցանակին, եւս լին: Փարիզի Արուեստագէտներու Միութեան կազմակերպած հարցախոյզը, Գառզուն կը գտնէր տասը լաւագոյն նկարիչներու գլուխը: 1956 թ. արժանացած է Պատուոյ Լեգէոնի Ասպետի շքանշանին: Երկու տարի ետք՝ Արուեստներու եւ Գրականութեան կարգի Սպաշի մրցանակին:

1952 թ. սկսած է նաեւ բեմական նկարչութեան, այս մարզին մէջ եւս մեծ համբաւ ձեռք բերելով: Պատրաստած է բեմասարքերն ու գլխաւորները Ռամոնի «Բարեկիրթ հնդիկները»-ին (փարիզի Ազգային թատրոն, 1952), Ատանի «Ժիզէլ»-ին (1953), «Գայլը»-ին (Շան Գլիզի թատրոն, 1953), Ռասինի «Աթալի»-ին «Բոմբեռի Ֆրանսէզ, 1955), «Դրախտէն Ետք»-ին, «Ժանն ու իր դատաւորները»-ին, Օֆենպախի «Փերիքը»-ին, եւս լին:

1957 թ. սկսեալ կատարած է նաեւ գիրքերու նկարազարդումներ, ինչպէս Անտրէ Մորուալի «Ֆրանսասան», Էռնէստ Զեմիկուէլի «Հրաժեշտ գէնքերուն» (1963), Ժաք Օտիպերի «Փշոտ ծովակը» (1957), Ալպէր Բամիլի «Յուշատետրերը» (1965), իր կնոջ՝ Նան Գառզուի մանկական հեքիաթը՝ «Շրջուած քաղաքը», եւս լին:

Վերջին երկու տասնամեակներուն, ստեղծած է նաեւ ջրանկարներ, գունաւոր վիմագրութիւններ եւ գարդարանկարային խեցեգործութիւններ, որոնց մէջ յատկանշա-

նակ են կարմիրի, նարնջագոյնի եւ կապոյտի վառ երանգները:

Կը մասնակցի Ֆրանսահայ արուեստագէտներու ձեռնարկներուն: 1966 թ. առաջին անգամ ըլլալով այցելած է Հայաստան եւ Երեւանի մէջ տուած է 150 գունաւոր վիմագրութիւններու եւ գիրքերու ցուցահանդէս մը, որուն ցուցանները ամբողջութեամբ նուիրեց Հայաստանի պետական պատկերասրահին:

Իր մասին հատորներ գրած են Ֆրանսացի ակնաստոր արուեստաբաններ Ֆլորան Ֆելսը, Տ. Շըվալիէն, Ռոպերտ Ռէյը, Փիէր Լամպերթէնը, Մակի Ֆիւրհանժը, ակադեմիկոսներ՝ Ռոժէ Բալուան, Մարսէլ Պրիոնը եւ շատ ուրիշներ: 1971 եւ 1975 թթ. լոյս տեսան իր գործերուն ծաւալուն եւ մեծադիր էջերով, փառակազմ ալպոմները, Ա. հատորին մէջ ամփոփուած են 1948-1962 թթ. գործերը, իսկ Բ. հատորին մէջ՝ 1963-1968 թթ. գործերը:

1977 թ. Ֆրանսայի Գեղարուեստից Ակադեմիայի անդամ ընտրուած է եւ 1979 թ. արժանաւորապէս բազմեցաւ անոր անհամերու մէկ անդամին վրայ:

Իսկ այս տարուայ «Ինքնեք»-ի օրացոյցը կը նշէ նկարիչ եւ բեմայարդար Ժան Գառզուի անունը, քանի որ այս տարի լրացաւ անոր ծննդեան 100 տարին:

1938 թուականէն սկսեալ ան կը կազմակերպէ աւելի քան հարիւր անհատական ցուցահանդէսներ եւ Ֆրանսայի եւ արտասահմանի մէջ:

1995ին Տինարտի մէջ կը բացուի Գառզուի անունը կրող թանգարան մը: (Եգիպտահայ Մշակոյթի Պատմութիւն) Ա.

### ԹԵՐԱՆՈՒՄ

Շարունակուած էջ 15-Էն

Ահարոնեանին, որի հետ ունեցայ հաճելի գրույց, առօրեայ հարցերի շուրջ: Յարգելի բարերարը համառօտակի կերպով ծանօթացրեց իր ապագայ բարեգործական ծրագրերին:

Թեհրանաբնակ բարեկամներս առիթ ստեղծեցին հանդիպելու աշուղ Թեւան Քոչարեանին, որին ծանօթ էի տարիներից ի վեր: Հանդիպեցի նաեւ երիտասարդ գործիչ, Քա՛լա՛ւ՛ գիւղի Ս. Յակոբ եկեղեցու պատասխանատու էդիկ Նազարեանին, (որդին Քա՛լա՛ւ՛յի երկար տարիների գիւղապետ՝ Աւետիս Նազարեանի): Համակրելի երիտասարդ էդիկ Նազարեանը, որն զբաղուած է մեծ մասամբ միութենական աշխատանքներով: Ինձ հիացմունք պատճառեցին երիտասարդ եւ օրինակելի ամուսիններ Մերուժան եւ

Ռուբինա Վարդանեանները եւ նրանց անսահման կորովն ու եռանդը: Նրանք մաս կազմելով կրթական հաստատութիւնների ծնողական խորհուրդներին, ոչ մի ջանք չեն խնայում բարոյապէս եւ նիւթապէս օգնելու մեր դպրոցներին: Գնահատելի աշխատանք են կատարում վերոնշեալ գոյգերը եւ միշտ առաջին դիրքերի վրայ են:

\*\*\*

Վերջացնելով ճամբորդական տպաւորութիւններս Իրանից, ցաւալիօրէն պիտի նշեմ որ շարունակուած է «արտագաղթը» որն ուղղակի համաճարակի բնույթ է ստացել: Մէկը միւսի ետեւից փակուած են հայոց դպրոցները, աշակերտները սակաւութեան պատճառով: Հայաթափուած են երբեմնի հայաբնակ քաղաքներն ու գիւղերը: Իսկ ո՞վ է պատասխանատուն այս աւերիչ վիճակի...



# ՄԱՐՁԱԿԱՆ

## ԿԱՐԵՆ ԱՍՐԵԱՆԸ ԿՐԿԻՆ ԱՆՈՅԵԱՆ

Շախմատի Հայաստանի տղամարդկանց առաջնութեան վերջնամասում լուրջ փոփոխութիւններ տեղի ունեցան: Վստահ մեկնարկից յետոյ մրցաշարային աղիւսակի առաջին հորիզոնականում ամրապնդուած Տիգրան Պետրոսեանը ոչ միայն չկարողացաւ պահպանել առաւելութիւնը, այլեւ աստիճանաբար նահանջեց եւ բաւարարուեց միայն 5-րդ հորիզոնականով:

Վերջին տուրից առաջ ախոյեանութեան համար պայքարում են Արտաշէս Մինասեանը եւ Կարէն Ասրեանը: Ասրեանը սեւերով ոչ-ոքի խաղաց Տիգրան Նալբանդեանի հետ, իսկ Արտաշէս Մինասեանը՝ Արման Փաշիկեանի հետ: Այսպիսով առաջնութեան վերջին տուրից յետոյ Կարէն Ասրեանը եւ Արտաշէս Մինասեանը 8 միաւորով բաժանուած էին առաջին հորիզոնականը: Սակայն Ասրեանը աւելի բարձր վարկանիշի շնորհիւ երկրորդ տարին անընդմէջ դարձաւ Հայաստանի ախոյեան: Իսկ Արտաշէս Մինասեանը, թէեւ գրաւեց երկրորդ հորիզոնականը, սակայն իրաւունք ստացաւ հանդէս գալ ազգային հաւաքականում, քանի որ Ասրեանը նման իրաւունք ունէր նախքան առաջնութիւնը:

14-ամեայ պատանի Սամուէլ Տէր-Սահակեանը 7.5 միաւորով հանգրուանեց 3-րդ հորիզոնականում: Նա լրացրեց գրոսմայստերի նորմա եւ եւս 2 անգամ նման ցուցանիշ ցոյց տալու դէպքում կը դառնայ հայ ամենաերիտասարդ գրոսմայստերը:

\*\*\*\*\*

Աւարտուեց նաեւ շախմատի Հայաստանի կանանց բարձրագոյն խմբի առաջնութիւնը: Ինչպէս եւ տղամարդկանց մրցաշարում, այստեղ էլ ախոյեանուհին որոշուեց լրացուցիչ գործակիցներով: Աւարտական տուրից առաջ Միրանուշ Անդրէասեանն ու Լիլիթ Գալոյեանը վաստակել էին հաւասար՝ 5,5-ական միաւոր: Վերջին տուրում երկուսն էլ յաղթեցին. Անդրէասեանը՝ Խառատեանին, Գալոյեանը՝ Մարիանա Գասպարեանին: Լրացուցիչ գործակիցներով 6,5 միաւորով ախոյեանուհի հռչակուեց Լիլիթ Գալոյեանը:

Բրոնզէ մեդալը բաժին հասաւ Նելլի Աղինեանին: Նա յաղթելով Նարինէ Գասպարեանին, վաստակեց 5,5 միաւոր: Վերջինս 5 միաւորով զբաղեցրեց 4-րդ տեղը:

Աղաբեկեանը յաղթեց Մովսիսեանին, Կարապետեանը պարտուեց Մարտիրոսեանին: 4-ական միաւորով յաջորդ տեղերում են Մարիանա Գասպարեանն ու Անահիտ Խառատեանը: 3,5-ական միաւոր վաստակեցին Նայիրա Մովսիսեանը, Լիանա Աղաբեկեանն ու Լիա Մարտիրոսեանը: Աղիւսակը 3 միաւորով եզրափակեց Լուսինէ Կարապետեանը:

## ՀՈԿԵՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱԽՉԱԽԵՑ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

Հոկեյի Հայաստանի մինչեւ 20 տարեկանների հաւաքականը աշխարհի առաջնութեան 2-րդ խաղում 13:1 հաշուով ջախջախել է Թուրքիայի ընտրանուն: Հայաստանի հաւաքականը այս հաշուով պարտութեան էր մատնել նաեւ Հարաւ Ափրիկեան Հանրապետութեանը:

Արդէն առաջին խաղակէստում Հայաստանը գործնականում վճռել է խաղի ելքը՝ 4 անպատասխան տափօղակ ուղարկելով մրցակցի դարպասը: 2-րդ խաղակէստում մեր թիմը կրկին ճնշող առաւելութիւն է ունեցել՝ հաշիւը դարձնելով 8:1: 3-րդ խաղակէստում հայ երիտասարդները հաշիւը դարձրել են 13:1: Այս խաղում 3-ական գոլի հեղինակ են դարձել Աբրահամ Պալեգեանը, Պետրոս Ժամկոչեանը, Սմբատ Դետերդարեանը:

Հայաստանի հաւաքականը աշխարհի առաջնութեան 3-րդ դիվիզիոնում 2-րդ անընդմէջ պարտութիւնն է կրել: 4:8 հաշուով Նոր Զելանդիայի պարտուելուց յետոյ՝ Հայաստանի ընտրանին 0:6 հաշուով զիջել է տանտէրերին՝ Սերբիայի հաւաքականի հոկեյիստներին:

### ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գաղեգեան գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը \$500 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

**Հայ Թելեժամը կը Վերադառնայ 18ը Ալիքի Վրայ Ոչ թէ մէկ, ոչ թէ 2, ոչ թէ 3 ժամ այլ Օրուան 24 ժամերը**

### Շաբաթը 7 օր անվճար

Հարկ չկայ բաժանորդագրուելու - 40 Յաւելեալ ալիքներ

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Հայկական Թելեժամ (818) 982-2400

\*\*\*\*\*

The Armenian Teletime Is Back On Channel 18  
Not 1 Hour, Not 2 Hours, Not 3 Hours But 24 Hours Per Day  
7 Days Per Week, Free

No Subscription Fee - Plus 40 Additional Channels

For info call The Armenian Channel (818) 982-2400

## ՀԱՅԱՍՏԱՆԻ 7 ՃԻԴՈՒՍՏՆԵՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԱԽԱԹԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻՆ

Հայաստանի 7 ճիւղորստներ կը մասնակցեն Յունուարի 26-27-ը Թբիլիսիում կայանալիք աշխարհի գաւաթի փուլային մրցաշարին, որը միաժամանակ նաեւ օլիմպիական վարկանիշ ունի: Ինչպէս «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ճիւղորսի ֆեդերացիայում, ՀՀ հաւաքականի գլխաւոր մարզիչն է Գագիկ Աղամալեանը, մարզիչները՝ Արթուր Գէորգեանը եւ Կարէն Սիմոնեանը: Հաւաքականում ընդգրկուած են՝ 60կգ քաշայիններ Յովհաննէս Դաւթեանը, Աշոտ Վարդիկեանը, 66կգ քաշայիններ Մեսրոպ Բարբարեանը, Համբարձում Տօնոյեանը, 73կգ քաշայիններ Ղազարոս Գրիգորեանը, Ռոբերտ Վարդանեանը, 90կգ քաշային Յակոբ Առաքելեանը:

## «ԲԱՆԱՆՑՈՒ» ՊԱՐՏՈՒԵԼ Է ՏԱՇՔԵՆԴԻ «ՊԱԽՏԱԿՈՐԻՆ» ԵՒ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ Է 4-ՐԴ ՏԵՂԸ ՍԱՆԿՏՊԵՏԵՐԲՈՒՐԳԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի փոխախոյեան, Երեւանի «Բանանցը» 0:3 հաշուով պարտուել է Տաշքենդի «Պախտակորին» Սանկտ Պետերբուրգում ընթացող ԱՊՀ եւ բալթեան երկրների ֆուտբոլի համագործակցութեան գաւաթի 2-րդ փուլում ու 1 միաւորով զբաղեցնում է վերջին՝ 4-րդ տեղը իր ենթախմբում: Նախորդ խաղում «Բանանցը» ոչ-ոքի է խաղացել Բելառուսի ախոյեան «ԲԱՏԵ»-ի հետ: Մրցաշարում առաջատարը «Պախտակորին» է, որն ունի 6 միաւոր՝ նախորդ խաղում 1:0 հաշուով յաղթելով Կիւբի «Դինամոյի» փոխարինողներին, 2-րդ տեղում է «ԲԱՏԵ»-ն՝ 2 միաւորով, 3-րդ տեղում՝ «Դինամոն»՝ 1 միաւոր: Մրցաշարի յաջորդ փուլը դուրս գալու համար «Բանանցին» անհրաժեշտ է ենթախմբի վերջին փուլում յաղթել «Դինամոյին», իսկ միւս խաղում «Պախտակորը» յաղթի կամ գոնէ ոչ-ոքի խաղաց «ԲԱՏԵ»-ի հետ: Այդ դէպքում 4 միաւոր վաստակած «Բանանցը» կը զբաղեցնի 2-րդ տեղը եւ «Պախտակորի» հետ միասին դուրս կը գայ յաջորդ փուլ:

## ՏՈՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Շաբուկա կուած էջ 8-էն

տար Յիսուս մանուկին տանող ճամբան:

Ապա, Մննդեան երաժշտախառն բեմադրութիւնը ներկայացուեցաւ ամբողջ աշակերտութեան, որմէ ետք աշակերտները իրենց դասարաններում մէջ, խորախմբի հաւաքայիներ ունեցան եւ նուէրներ փոխանակեցին:

Մանկամտերի բաժինն ալ ունեցաւ իր տօնական յայտագիրը, երգերով ու արտասանութիւններով: Ուսք առին տնօրէնն ու մանկամտերի պատասխանատուն՝ Տիկ. Մակի Թովալեան:

Կէսօրին, ուսուցիչ-աշակերտ, իրարու բարեմաղութիւններ ընելով, մեկնեցան արձակուրդի, վերադառնալու համար Յունուար 8ին:

Վարժարանիս Ե. Զ. է. եւ Ը. կարգերէն խումբ մը աշակերտներ, պրն. Ռաֆֆի Ղազարեանի առաջնորդութեամբ, էլոյթ ունեցան հոգեւոր երկու երգերով եւ Սբ. Գրային ընթերցումով, Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միացեալ յատուկ պաշտամունքի մը ընթացքին՝ Սուրբ Մննդեան Տօնի աւիթով, 6 Յունուար 2008ին, United Armenian Congregational Church (UACC)ի մէջ:

Մերտինեան վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու Արեւմտեան Ընկերակցութեան կողմէ - Western Association of Schools and Colleges (WASC): Վարժարանի մասին յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել (818) 907-8149:

### ԳՐԱԴՈՒԱԾ ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐ

- |              |                            |
|--------------|----------------------------|
| Փետրուար 3   | Superbowl party            |
| Փետրուար 14  | Valentine Dinner           |
| Մարտ 1       | Comedy Night               |
| Մարտ 23      | Չատկուայ Տօնակատարութիւն   |
| Ապրիլ 5      | Spanish Night              |
| Ապրիլ 26     | Las Vegas Trip             |
| Մայիս 11     | Մայրերու Օրուայ Երեւոյն    |
| Յունիս 14    | Յայրերու Օր                |
| Օգոստոս 10   | Յանգամակային Երեւոյն       |
| Յոկտեմբեր 4  | «Մասիս» շաբաթաթերթի        |
| Դեկտեմբեր 31 | Յ.Մ.Մ.ի Տարեկան Պարահանդէս |
|              | Նոր Տարուայ Խորհրդանք      |

## «ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ» ԸՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ (ՎԼԵՆՏԵՅԼ, ՊՈՐՊԵՆԵ, ԼԱ ՔՐԵՄԵՆՅԱ)

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00



### ՄԱՐԱԶԴ-ՇՈՊԵՐԱՆՊԻՍ

Սրտի անհուն կսկիծով կը գուժենք մեր կնոջ, մօր, մեծ մօր եւ ազգականին



ԺԱՆԷթ ՄԻՆԱՍԵԱՆԻ (Ծն. Յունուար 6, 1930)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Դեկտեմբեր 18, 2007, Լոս Անձելոսի USC University Hospital-ի մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան: Հանգուցեալին հոգևոյն համար, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, Յունուար 27, 2008ին, առաւօտեան ժամը 11:00ին, Կլէնտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ 1510 E. Mountain, Glendale, CA

Սգակիրներ՝ Ամուսինը՝ Ալպէր Մինասեան, Դուստրը՝ Սիրան-Ժումանա Մինասեան, Թոռնիկը՝ Մայա Մինասեան, եւ համայն ազգականները եւ բարեկամները:

Հոգեհանգիստէն ետք, հոգեսուրճ պիտի մատուցուի եկեղեցւոյ սրահը: Փոխան ծաղկեպսակի նուիրատու քիւմնեքը կատարել Հ.Մ.Ս.ին, 1060 North Allen Avenue, Pasadena, 91104:

### ՄԻՈՒԹԻՒՆԸ ՇԱՐԱՆԱՍ ՏՈՒՆ Է ՇԱՅԻ

Շարունակուած էջ 13-էն

Նա երկար տարիներ Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի նախագահն էր, մեծահարուստ եւ ճանաչուած դէմք պետական շրջանակներում, մի քանի ընկերութիւններ էր ղեկավարում, յարգուած անձնաւորութիւն, մասնագիտութեան բերումով ծանօթացել էր նրա հետ եւ մօտիկ յարաբերութիւն ստեղծել:

-Իրանի թի գործարանի կառավարիչն էր Վահրամի եղբայր՝ Հարմիկը: Վահրամի կարգադրութեամբ անյապաղ որոշեց դրամի դիմաց մեզ իրանի յանձնել: Իսահակը դրամ չունէր ապրանքի գինը վճարելու, բարեբախտաբար մօտս դրամ կար, վճարեցի ու ապրանքի յանձնարարագիրը ստացանք:

-Իսահակի ուրախութիւնը չափ ու սահման չունէր, նրա ուրախութեամբ ես էլ հոգեպէս գոհ էի եւ բաւարարուած, որ կարողացել էի մի օգտակար գործ կատարել եւ սիրտ գրաւել:

-Այդ դէպքից մի որոշ ժամանակ անցել էր: Մի օր առաւօտեան մեր տան գանգը զարկեցին, իսահակն էր, հրաւիրում եմ նստելու.

-Ինչ կայ պրն. Իսահակ, խէր լինի. -Պրն. Հրանդ տղայիս պատ-

կում եմ, հարսանեաց հանդէսի առաջին հրաւերը քեզ համար եմ բերել, ա՛խր, կարելի՞ է քո արած լաւութիւնը մոռանալ:

-Իսկապէս այդպէս էր, բոլորովին արածս մոռացած նոյնիսկ չէի յիշում, կարիք էլ չկար յիշելու, քանի որ առաձն ասում է՝ բարիք արա եւ ջուրը նետիր՝ Նրա այս վերաբերմունքը ինձ հոգեկան գոհունակութիւն պատճառեց:

Ասում են՝ աղանին ազատեց մեղուի կեանքը: Նա ուշքի գալով գլուխ բարձրացրեց իր փրկարարին շնորհակալութիւն յայտնելու, սակայն աղանին թռաւ, որպէսզի մեղուն յանկարծ չամաչի: Անցան օրեր ու ամիսներ, ինչպէս պատահեց, նոյն աղանին որսորդի թիրախ դարձաւ, որսորդը հրացանը պարզած կրակելու վրայ էր, երբ մեղուն շատ հեռուից նկատեց դա, լոյսի արագութեամբ իրեն հասցրեց որսորդին, նրա ձեռքը խայթելով գնդակը շեղուց եւ աղանին ազատուց: Ուրեմն ոչ մի բարի գործ չի մոռացուած:

Ինչ լաւ է, մարդիկ բարիքի դիմաց երախտագէտ են գտնուում, այսպիսով յարաբերութիւնները ջերմացնում եւ կեանքը քաղցրացնում են:

(Շարունակելի 1)

### ՇԱՐԱՆԱՍԻ ԲՐԻՍՏՈՆԵՒԹԵԱՆ ԴԱՐՁ

Շարունակուած էջ 14-էն

րիչ կը գործէ անդադրում, կը կազմէ թեմեր, կը կազմաւորէ ծէսն ու ծիսակատարութիւնը, կը գրէ ձառեր ու Քարոզներ, կը շարադրէ դաւանանքի յատուկ կէտեր, եւ 325 թուականին գործէ քաշուելով իր կրտսեր որդին՝ Արիստակէս (325-333 թ.) կը յաջորդէ իրեն որպէս կաթողիկոս հայոց: Արիստակէսի կը յաջորդէ իր երէց եւ ամուսնացեալ եղբայրը՝ Վրթանէս (333-341 թ.): 325 թուի Նիկիոյ Ա Տիեզերական Ժողովին Հայ եկեղեցին կը ներկայացնէ Արիստակէս Հայրապետ, որուն անունը կ'երեւի ներկաներու ցանկին մէջ: Վերադարձին՝ Արիստակէս իր հետ Հայաստան կը բերէր Նիկիոյ Ժողովի կանոններն ու որոշումները, որոնց վրայ Գրիգոր Լուսաւորիչ կը կատարէր յաւելումներն ու հաստատումները:

Այս բոլորով մէկտեղ հարկ է նշել որ հայոց քրիստոնէութեան դարձի գլխաւոր պատմիչը՝ Ազատութեան գեղարու, չի տար որոշ թուականներ եւ տրամաբանական ժամանակագրութիւն մը: Այսուհանդերձ, կասկած չկայ որ Մեծ Դարձին հետ կապ ունեցող բոլոր անձնաւորութիւնները պատմական անձինք են եւ ունին իրենց գործունէութեան թուականն ու աշխարհագրական սահմանը: Այսպէս, Տրդատ Գ թագաւորի անմիջական հովանաւորն է Հռոմի Դիոկղետիանոս կայսրը (284-305 թ.), որուն հաւանութեամբը Տրդատի թագաւորութիւնը կը հաստատուէր Հայաստանի մէջ: Նաեւ, Տրդատի հայոց թագաւոր ըլլալը կը հաստատուէր երկու վիճակն արձանագրութիւններով, մին գտնուած 1899 թուին, եւ միւսը՝ 1945 թուին, առաջինը Մայաֆարկին (Տիգրանակերտ) քաղաքի պարիսպին վրայ, եւ երկրորդը՝ Գառնիի հեթանոսական տաճարի պատին վրայ, որուն մասին Մովսէս Խորենացի ունի ճշգրիտ ծանօթութիւն. (Յակոբ Մանանդեան, Քննական Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան, Բ. ա. մաս (1957) էջ 120, 132. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց Բ. գլ. 90: Գրիգոր Լուսաւորիչ նոյնպէս անմիջական կապ ունեցած էր Կեսարիոյ Ղեւոնդիոս Արքեպիսկոպոսին հետ, որմէ իսկ ձեռնադրուեցաւ: Ղեւոնդիոս պատմական անձ մըն է, որովհետեւ ան ներկաներէն մին եղած է Նիկիոյ Ա Տիեզերական Ժողովին, եւ իր անունը արձանագրուած է որպէս մասնակից:

Երկու օտար պատմիչներու վկայութիւնները եւս անհրաժեշտ կը նկատեմ ճոս արձանագրել որպէս եզրակացութիւն, ցոյց տալու համար թէ քրիստոնէութիւնը տիրա-

կան կրօնքը դարձած էր Հայաստանի 310 թուականէն առաջ եւ ոչ թէ ետքը: Անոնցմէ առաջինն է դէպքերու ժամանակակից Դ դարու Եւսեբիոս Կեսարացին որ հետեւեալը կ'ըսէ հայոց մասին, նշելով յատկապէս կայսեր յայտարարած պատերազմը հայոց դէմ 311 թուականին, հայոց քրիստոնէութիւնը ընդունած ըլլալուն համար: Քրիստոնեայ պատմիչը Եւսեբիոս կ'ըսէ.

«Բացի այդ, բռնակալ կայսեր (Մաքսիմիանոս Դայեայի) ձեռքով պատերազմ յայտարարուեցաւ հայերու դէմ, որոնք սկիզբէն բարեկամ էին ու դաշնակից հռոմայեցիներուն: Բայց որովհետեւ (հայերը) քրիստոնեայ էին եւ եռանդով ու բարեպաշտութեամբ Աստուծոյ կ'երկրպագէին, այս աստուածատեացը փորձեց անոնց ստիպել որ անոնք զոհաբերութիւն մատուցանեն կուռքերուն: Ուստի իրենց բարեկամ եւ դաշնակից ճանչցուածները (հայերը) վերածեց թշնամիի եւ մարանչողի: Ինքն իսկ հայերու դէմ մղած այդպատերազմի ընթացքին ջախջախուեցաւ իր բանակին հետ»:

Եկեղեցական Պատմութիւն Թ. գլ 8

Երկրորդ պատմիչն է Ե դարու քրիստոնեայ եկեղեցւոյ պատմիչ Սոզոմենոս, որ կը յիշէ Տրդատ թագաւորը որպէս պաշտպան քրիստոնէութեան, կ'աւելցնէ ըսելով.

«Ես տեղեկացայ որ հայերը քրիստոնէութիւնը ընդունած են աւելի առաջ քան վրացիներն ու ուրիշներ: Կ'ըսեն որ Տրդատը որ այս ժողովուրդի առաջնորդն էր, աստուածանշան հրաշքի մը պատճառով որ պատահեցաւ իր տանը մէջ, իսկոյն ինքը դարձեր է քրիստոնեայ ու նաեւ հրամայեր է որ քարոզութեան միջոցով այդ կրօնը ընդունին բոլոր իր հպատակները»:

Եկեղեցական Պատմութիւն Բ. գլ 8


Այս երկու մէջբերումները անփոխարինելի են եւ շատ կարեւոր: Անոնք կը հաստատեն օտարներու բերումով եւ գրեթէ ժամանակակից ճշգրտութեամբ թէ հայերը քրիստոնեայ դարձած էին պետականօրէն, թագաւորով եւ ժողովուրդով, չորրորդ դարու առաջին տարիներուն: Համաձայն պատմագէտ Յակոբ Մանանդեանի, վրացիք քրիստոնեայ եղան 337 թուականին: Մովսէս Խորենացի իր կարգին կը հաստատէ որ Գրիգոր Լուսաւորիչ «գրաւեց Ս. Թադէոս առաքեալի աթոռը Տրդատ թագաւորի գահակալութեան 17-րդ տարին», որ է 303 թուականը: Խորենացիի հաշիւը ճիշդ է, քանի որ Տրդատ Գ թագաւորի գահակալութեան թուականը ծանօթ է որպէս 287, որուն 17-րդ տարին կ'ըլլայ 303 թիւը:

**ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00  
Կլէնտէյլի 26-րդ կայանից

 **Merrill Lynch**  
INVESTMENT BANKING  
**JACK KALANJIAN**  
Professional Financial Advisor  
Corporate Center Pasadena  
225 So. Lake Avenue  
Pasadena, CA 91101  
(626) 396-2825 Direct  
(626) 376-4665 Fax  
jack\_kalanjian@ml.com  
"Helping the Armenian Community Build Wealth"



# Դիմեցէ՛ք Բժ. Դավիթ Դավթեանին



**Բժ. Դավիթ Դավթեանը կը սեպուի LAPBAND-ի լաւագոյն մասնագետ ռահվիրան որն ունի եզակի փորձարութիւնը եւ՝ իբրեւ մասնագետ եւ՝ իբրեւ LapBand կրող անձ:**

David G. Davtyan M.D., FACS, FICS,  
Board Certified - American Board of Surgery, American Board of Bariatric Medicine  
American Society for Metabolic and Bariatric Surgeons

*110 Ֆունդ կշիռք  
կորսցնլէն վերջ սկսեցի  
ինքզինքս բոլորովին  
նոր անձ մը տեսնալ:  
LapBand-ը եղաւ  
կեանքիս փրկութիւնը:  
— Տանիս Պ.*



*114 Ֆունդ կշիռ կորսցնլը եւ հագուարկեղենի  
22 չափէն 4 չափին իջնալը, կեանքիս ամենէն  
յաճելի երևոյթներէն մին կղամ է, ԲԱՅՅ  
միայն մէկ ամիսուանը ունիմ՝ երանի սակի  
կանուխէն LapBand ըլլայի:  
— Ռինա Բ.*

### Յիշեցէ՛ք՝

Եթէ հոգնած էք նիհարնալու միջոցներ փորձելէն եւ որոնելէն  
Եթէ հոգնած էք չնիհարնալու յուսախաբութենէն  
Եթէ կ'ուզէք՝ ՆԻՏԱՐՆԱԼ ԱՐԱԳ եւ ԸՆԴՄԻՇՏ  
Եթէ կ'ուզէք՝ ըլլալ ԱՌՈՂՋ եւ ԳԵՂԵՑԻԿ  
Դիմեցէ՛ք Բժ. Դավիթ Դավթեանին



BEVERLY HILLS OFFICE  
11847 Wilshire Blvd., Suite 200  
Los Angeles, CA 90025  
(310) 500-3750

GLENDALE OFFICE  
1141 N. Brand Blvd., Suite 300  
Glendale, CA 91202  
(818) 546-1500

[www.LapBandLA.com](http://www.LapBandLA.com)  
[www.NewHopeToday.com](http://www.NewHopeToday.com)  
Info@NewHopeToday.com